



ԱՂԱՏ ՕՐ



«AZAT OR» ARMENIKH KATHMERINH EFHMERIDA

ՈՒՐԲԱԾ 5-ՇԱԲԱԾ 6 ՅՈՒՆԱՍՏ 2024 ԹԻՒ 22587 - 79^Դ ՏԱՐԻ, ΠΑΡΑΣΚΕΥΗ 5-ΣΑΒΒΑΤΟ 6 ΙΑΝΟΥΑΡΙΟΥ 2024, 79^Ο ΕΤΟΣ, ΑΡΙΘ. ΦΥΛΛΟΥ 22587

Կառավարական փոփոխություններ Յունաստանի մէջ

Չորեքշաբթի օր, Յունաստանի վարչապետ Քիրիակոս Միցոթաքիս կատարեց փոփոխություններ կառավարության կազմին ներս: Գլխավոր փոփոխությունը տեղի ունեցավ Հանրային ապահովության նախարարության մէջ, նախարարի պաշտօնին նշանակելով Միխալիս Խրիստիդիսը, իսկ փոխ նախարարի պաշտօնը կը ստանձնէ երիտասարդ երեսփոխան Անտրէաս Նիքոլաքոփոկոս: Քաղաքական փորձագէտներու համաձայն այս փոփոխությունը հրամայական կը դառնար, յատկապէս Հանրային ապահովության ոլորտին ներս տեղի ունեցած լուրջ միջադէպերէն ետք, որոնք մտահոգութիւն ստեղծած էին յունական իրականութեան մէջ: Նաեւ, ոստիկանական ուժերուն մօտ յառաջացուցած էին ժխտական մթնոլորտ, երբեմն հակակարգապահական դրսեւորումներու առաջնորդելով: Խրիստիդիսի երեւումը նախարարութենէն ներս նոր չէ, քանի ան հինգերորդ անգամ ըլլալով կը ստանձնէ սոյն պաշտօնը, մինչ քաղաքական կեանքէն ներս ան կը նկատուի յաջող նախարար մը, որ անցեալին արդիւնաւէտ գործունէութիւն ցուցաբերած էր ապահովական հարցերուն առնչութեամբ:

Երկրորդ գլխավոր փոփոխությունը տեղի ունեցավ Ատոնիս Եորդիատիսի՝ Առողջապահական նախարարութեան ղեկավարութեան ստանձնումով: Ըստ կառավարական շրջանակներու կը սպասուի, որ նոր նախարարը պահանջուած փոփոխությունները մուծէ առողջապահական մարզէն ներս:

Իրեն համար արդէն ծանօթ մարզ մը ստանձնելով, Կրթութեան փոխ նախարար Տոմաս Միխայիլիստի կը վերադառնայ Աշխատանքի նախարարութիւն: Նշենք, որ իր կարճ պաշտօնավարութեան ընթացքին, Կրթութեան նախկին փոխնախարարուիին ներկայ եղած էր նաեւ հայկական վարժարաններէն ներս դպրոցական տարեմուտի ջրօրինէքի արարողութեան առիթով: Միխայիլիստի ու նախկին պաշտօնը կը գրաւէ երեսփոխան Իոաննա Լիթորիվի, որ արդէն փորձառութիւն ձեռք ձգած է կրթական մարզէն ներս: Վերջապէս, կառավարական ներկայացուցիչ Փալոս Մարինաքիս կը դառնայ վարչապետին մօտ նախարար եւ իր ուսերուն վրայ պիտի վերցնէ նաեւ մամուլի հարցերու դասավորումը:

Կառավարական փոփոխությունները անպատասխան չմնացին ընդդիմադիր կուսակցություններուն կողմէ, որոնք խստորէն քննադատեցին կատարուած նշանակումները, յայտնելով, թէ անոնք ցոյց կուտան կառավարութեան գործունէութեան ճախողումը:

ԽՕՍՔ ԾՆՆԴԵԱՆ

ԵԹԷ ...

«Փառք ի բարձունս Աստուծոյ
եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»
(Ղուկաս 2:14)

Ամանորը տարուան առաջին տօնն է, որ իր մէջ կ'ընգրկէ նորին ուրախութիւնը, եւ նորին հետ՝ նոր առիթներու առթած յոյսը: Ամանորը, ժամանակի իմաստով, մեր կեանքին առջեւ բացուած նոր առիթներու եւ հնարաւորություններու հանգրուան մը է, որ նոր կարելիութիւն կ'ընձեռէ անկատար իղձերու իրականացման, կիսատ մնացած ծրագիրներու ամբողջացման եւ կամ ալ՝ որեւէ գործի մը կամ վարուելակերպի մը սրբագրման: Ամանորը մեր մէջ ժամանակի հասկացողութեան անդրադարձ կը կատարէ, որուն հաստատումը աստուածաշնչական է: Ծննդոց գրքի առաջին իսկ էջերէն, աշխարհի ստեղծագործութեան ընդմէջէն, Աստուած մարդուն տուաւ ժամանակի ըմբռնումը, երբ ցերեկուան եւ գիշերուան թաւալքով, վեց օրերու ընթացքին ամբողջացուց տիեզերքի ստեղծագործությունը եւ եօթներորդ օրը հանգչեցաւ:

Ամանորին անմիջապէս յաջորդ տօնը, Յիսուս Քրիստոսի ծննդեան եւ մկրտութեան տօնն է, զոր Քրիստոսի առաքելները որպէս կանոն հաստատեցին, որ այս տօնը աստուածայայտնութիւն կոչուով տօնուի Յունուար ամսուան վեցին:

Հայ եկեղեցւոյ հայրերու ուշադրութենէն չէ վրիպած Ադամի ստեղծման եւ Յիսուս Քրիստոսի ծննդեան միջեւ զուգահեռ տեսնելը: Արդարեւ, Աստուած Ադամը՝ առաջին մարդը, ստեղծագործութեան վեցերորդ օրը ստեղծեց: Իսկ Առաքելները Նոր Ադամին՝ Յիսուս Քրիստոսի ծնունդը սահմանեցին նոր տարուան վեցերորդ օրը: Որովհետեւ, Աստուածաբանական մեկնողական գրականութեան մէջ, Քրիստոս կը ներկայացուի իբրեւ երկրորդ կամ նոր Ադամ: Առաջին Ադամը, աստուածային պատուէրին անհնազանդելով մեղանչեց Աստուծոյ դէմ, եւ հետեալբար կորսնցուց Աստուծոյ պատկերով ստեղծուած ըլլալու առանձնանորիւնները: Մինչ երկրորդ Ադամը՝ Քրիստոս, Աստուծոյ կամքին բացարձակ հնազանդութեամբ մարդեղանալով, մարդկային բնութիւնը առնելով վերականգնեց մարդուն Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած առանձնանորիւնները: Այլ խօսքով, Նոր Ադամը նորոգեց Մարդը, որով մարդկութիւնը հնարաւորութիւնը ունի վերականգնուած բնութեան արժանանալու, եթէ անշուշտ ընդունի Քրիստոսը որպէս Տէր եւ Փրկիչ:

Այս նորոգութեան, վերականգնման առաջին եւ գլխավոր աւետիսը տրուեցաւ աշխարհին սուրբ ծննդեան ատեն, երբ հրեշտակներու երկնային խումբերը մեծ ուրախութեամբ յայտնեցին հովիւներուն՝ աշխարհին ըսելով, «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն» (Ղուկաս 2:14): Այս աւետիսը իր հետ կը բերէր Աստուած եւ մարդ հաշտութիւնը, որով մարդը ճանչնալով իր Արարիչը, պիտի փառաւորէր զԱստուած Իր պարգէներուն համար, պիտի տիրէր խաղաղութիւնը մարդոց հոգիներուն մէջ եւ աշխարհի վրայ մարդոց հոգիները պիտի լեցուէին ճշմարիտ ուրախութեամբ:

Երկու հազար տարիներէ ի վեր, մարդկութիւնը օրէ ցօր խաղաղութեան պակասէ կը տառապի: Այսօր, 21-րդ սկիզբէն սկսեալ համատարած պատերազմներու սարսափը ամբողջ աշխարհը համակած է: Գիտութեան զարգացումով, կործանարար զէնքերու զօրութիւնը կը բազմապատկուի, քանի որ աշխարհի վրայ ցարդ գերիշխող տրամաբանութիւնը այն է, որ խաղաղութեան երաշխիքը հակադիր ուժերու հաւասարակշռութեամբ կը պայմանաւորուի: Աշխարհը դարձել շարունակ հաւատացած է, թէ ուժի գործադրութեամբ կարելի է երաշխաւորել խաղաղութիւնը: Պայմանագրերով, օրէնսդրութեամբ եւ բիրտ ուժի գործադրութեամբ պայմանաւորուած խաղաղութեան այս ըմբռնումը ինքնին խաղաղութեան բացակայութեան պատճառն իսկ է:

Այդ պարագային, ուր մնաց Սուրբ ծննդեան գիշերին երկինքին աւետած խաղաղութիւնը: Եթէ մարդացեալ Փրկիչը՝ Քրիստոս Խաղաղութեան Իշխանն է, ինչո՞ւ համար խաղաղութիւնը բացակայ կը մնայ մարդոց կեանքէն. ուրեմն ինչպէ՞ս կարելի է, որ Քրիստոսի աւետած խաղաղութիւնը իրականութիւն դառնայ մարդոց կեանքին մէջ:



Քրիստոսի բերած խաղաղութիւնը տարբեր է աշխարհի ուզած խաղաղութենէն, որ պատերազմներու դադարեցում է եւ ոչ թէ պատերազմներու պատճառներուն անհետացում:

Քրիստոսի աւետած խաղաղութիւնը ամէն բանէ առաջ մարդուն ներսիդիէն կը սկսի, եւ ոչ թէ հակառակը: Այնքան ատեն որ Քրիստոս չէ հրաւիրուած, չէ ծնած մեր կեանքէն ներս, մենք անհաղորդ կը մնանք երկնային խաղաղութեան: Մինչդեռ երբ զՔրիստոս մեր կեանքերէն ներս կ'ընդունինք, այլ խօսքով, երբ Քրիստոսի Ծնունդը մեր հոգիներէն ներս տեղի կ'ունենայ եւ ոչ թէ՝ մեր տուններուն կամ այլուր շինուած մսուրներուն մէջ, այն ատեն իսկական խաղաղութիւնը կը տիրէ մեր կեանքերէն ներս:

Այդ Խաղաղութեան պայմանը Սէրն է, որ Աստուած մարդոց սիրոյն համար մարդացաւ, եւ մարդոց պատուիրեց սիրել ուրիշները մեր անձերուն պէս: Աստուծային այդ Սէրն էր որ մարդեղանալով, Քրիստոս իբրեւ նոր Ադամ վերանորոգեց մեր մարդկային աղարտեալ բնութիւնը: Խաղաղութեան պայմանաւորող երաշխիքը, Քրիստոսով նոր մարդ դառնալն է: Այս մասին պերճախօս վկան ու պատգամողն է Պօղոս Առաքեալ, որ կ'ըսէ, «Ունէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է, այլեւս չէ այն՝ ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ: Եւ այս նորոգութիւնը կու գայ Աստուծմէ, Քրիստոսի միջոցաւ մեզ իրեն հաշտեցուց եւ նաեւ պաշտօն տուաւ մեզի՝ ուրիշներուն ալ հաշտութեան բերելու» (Բ. Կորնթացիս 5:17-18):

Հետեալբար Աշխարհի վրայ խաղաղութեան եւ մարդոց միջեւ հաճութեան նախապայմանը Քրիստոսով նորոգուիլն է, որ կը նշանակէ ապրիլ սիրոյ այն պատուիրանով որ Քրիստոս պատուիրեց: Հետեալբար, հարկ է որ Ս. Ծննդեան խորհուրդի իմաստը կեանքով արտայայտել, խաղաղութիւնը ներաշխարհին մէջ զգալ եւ հաշտ ապրիլ ուրիշներուն հետ, փոխանակ այլ տեղ եւ այլ կերպ փոխելու զայն:

ԵԹԷ անշուշտ մարդ ընդունի նորոգուիլ եւ դառնալ Քրիստոսով նորոգուած նոր մարդ:

Ս. Ծննդեան առիթով, անգամ մը եւս կը կրկնենք եւ իբրեւ աղօթք կը վերառաքենք Խաղաղութեան Իշխանին՝ Քրիստոսին, Հայ եկեղեցւոյ մեծանուն հայրապետ՝ Ներսէս Շնորհալիի հոգիի քնարէն բխած «Առաւօտ Լուսոյ» հոգեւոր երգին մէկ սա տունը՝

Նորոգող հնութեանց,

Նորոգեալ եւ զիս,

Նորոգ զարդարեալ:


Քրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ

Ձեզի մեզի մեծ աւետիս:

ԳԵՂԱՄ ԱՐՔ. ԽԱՇԵՐԵԱՆ
Առաջնորդ Յունաստանի Թեմին
Տօն Աստուածայայտնութեան

Հանրային հեռարձակողի խորհուրդը կը պարզաբանէ Գարեգին Բ. կաթողիկոսին պատգամի սփռումի դէպքը

Հանրային հեռարձակողի խորհուրդը, պարզաբանելով 31 Դեկտեմբերի կէսգիշերէն առաջ Առաջին ալիքի հեռարձակումի յայտագիրէն կաթողիկոսի ելոյթին բացակայութեան շուրջ քննարկումները՝ յայտարարութեան մը միջոցաւ տեղեկացուց, որ ՀՂԸ չէ հրաժարած հեռարձակելէ կաթողիկոսին ուղերձը, այլ Մայր Աթոռին անունով Վահրամ քահանայ Մելիքեան տեղեկացուցած է, որ կը պահանջեն չհեռարձակել եւ ընդհանրապէս չօգտագործել կաթողիկոսին ուղերձին տեսագրութիւնը, որուն հեղինակային իրաւունքները կը պատկանին Մայր Աթոռին:



«Դեկտեմբերի 31-ին Հանրային հեռուստաընկերութիւնը ծրագրել էր հեռարձակել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի ուղերձը ամենադիտուող հատուածներից մէկում՝ պաշտօնական ուղերձների համար այս տարի առանձնացուած ժամին: Կաթողիկոսի ելոյթը պէտք է յաջորդէր Սահմանադրութեամբ պետութեան գլուխ հանդիսացող ՀՀ նախագահի ելոյթին: Ցաւօք, Դեկտեմբերի 31-ին Մայր Աթոռի անունից տէր Վահրամ քահանայ Մելիքեանը Հանրային հեռարձակողի խորհրդին տեղեկացրել է, որ անհամաձայնութիւն են յայտնում ուղերձների համար նախատեսուած ժամի վերաբերեալ եւ պահանջում են չհեռարձակել եւ ընդհանրապէս չօգտագործել կաթողիկոսի ուղերձի տեսագրութիւնը, որի հեղինակային իրաւունքները պատկանում են Մայր Աթոռին: Քանի որ պահանջը միայն Հանրային հեռուստաընկերութեանն էր առնչուած, Խորհրդին ենթակա «Շողակաթ» հեռուստաալիքը եւ Հանրային ռադիօն ուղերձը հեռարձակել են, իսկ Հանրային հեռուստաընկերութեան եթերի վերաբերեալ բանաւոր դիմումը բաւարարուել է: Ամանորեայ ուղերձների հեռարձակման վերաբերեալ Հայաստանում չկայ օրէնսդրական կարգաւորում, եւ հէնց դա է պատճառը, որ իւրաքանչիւր հեռուստաընկերութիւն ինքն է որոշում, թէ երբ եւ ինչ հերթականութեամբ հեռարձակի ուղերձները, ինչն էլ տեղի է ունեցել: Հաշուի առնելով հանրային լայն արձագանգը՝ առաջարկում ենք խնդիրը կարգաւորել օրէնսդրական դաշտում», կ'ըսուի վերոնշեալ յայտարարութեան մէջ: Հանրային հեռարձակողի խորհուրդը կ'ափսոսայ այս միջադէպին համար՝ յուսալով, որ անիկա որեւէ ձեւով չ'անդրադառնար Հանրայինի եւ Մայր Աթոռի համագործակցութեան վրայ:



Իրանի մէջ ահաբեկչական արարք մը շուրջ 100 զոհեր խլեց

Իրանի Քերման քաղաքի գերեզմանատան մէջ, Չորեքշաբթի օր տեղի ունեցած պայթումներու պատճառով արձանագրուած զոհերու թիւը հասաւ 103-ի. վիրաւորուած են առնուազն 210 ուրիշներ:

Ահաբեկչական յարձակումը կատարուեցաւ Իրանի Իսլամական յեղափոխութեան պահապաններու ջոկատի զօրավար Քասեմ Սոլեյմանիի սպաննութեան 4րդ տարելիցին նուիրուած արարողութեան մը ընթացքին: Ըստ իրանեան լրատուամիջոցներուն՝ տեղի ունեցած են առնուազն երկու պայթումներ, Սոլեյմանիի գերեզմանատունը տանող ճամբուն վրայ, մզկիթի մը մօտերը: Նշենք, որ արարողութեան կը մասնակցէին հազարաւոր մարդիկ: Թեհրան խստօրէն դատապարտեց արարքը:

Լրատու

«Ատրպէյճան յոյս ունի շուտով վերսկսելու Երեւանի հետ խաղաղ բանակցութիւնները», կ'ըսէ Պաքու

«Մենք յոյս ունինք, որ շուտով տեղի կ'ունենայ բանակցութիւններու յաջորդ փուլը, եւ կը վերսկսի խաղաղ համաձայնագրի նախագիծի քննարկումը, զոր մշակած է Ատրպէյճան եւ առաջին անգամ ներկայացուցած Հայաստանին՝ միայն տարի մը առաջ», ըսաւ Ատրպէյճանի նախագահի յատուկ յանձնարարութիւններով ներկայացուցիչ Էլչին Ամիրպէրով՝ Էսթոնիոյ հանրային պատկերասփիւռի կայանէն կատարած յայտարարութեան ընթացքին՝ շեշտելով, որ համաձայնագրի բովանդակութեան շուրջ բանակցութիւններու ֆիզիքական բացակայութեան լոյսին տակ, երկու կողմերն ալ նախագիծերու փոխանակումները կը շարունակեն՝ կողմերէն իւրաքանչիւրը կը ներկայացնէ իր դիտողութիւնները եւ փոփոխութիւնները:

«Մենք, եւ ոչ միայն մենք, յոյս ունինք, որ Ատրպէյճանի կողմէ տարածքային ամբողջականութիւնը բոլորովին վերականգնելէ ետք, բանակցութիւններուն մէջ բեկումնային կէտի հասնելու կարելիութիւնները շատ աւելի մեծցած են», յայտնեց Ամիրպէրով, որ աւելցուց, թէ հաղորդակցութիւններու բացումը Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ խաղաղ գործընթացի անբաժանելի մաս է:

«Բանակցութիւններուն հիմնական ուղղութիւնը Պաքուի եւ Երեւանի միջեւ խաղաղութեան համաձայնագրի բնագրի համաձայնեցումն է: Բացի հիմնական կէտէն, անիկա կ'ընդգրկէ նաեւ երկու այլ կէտեր՝ հաղորդակցութիւններու բացում, ինչպէս նաեւ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ



պետական սահմանի սահմանազատում», ըսաւ ան:

Խօսելով երթեւեկի հաղորդակցութեան վերականգնման մասին՝ ան շեշտը դրաւ «Զանգեզուրի միջանցք»ին վրայ՝ նշելով. «Որպէսզի Ատրպէյճանի քաղաքացիները կարենան դիւրութեամբ ցամաքային ճամբով հասնիլ Նախիջեւան»:

«Խօսքը 42 քիլոմէթր երկարութեամբ երկաթագիծի մասին է, որ, դժբախտաբար, աւերուած է հակամարտութեան պատճառով. խօսքը միայն բացակայող հատուածի կառուցման մասին չէ. մեր կողմէ այդ աշխատանքները գրեթէ աւարտած են: Նկատի ունիմ Հորադիզ-Ագքանդ հատուածը, դժբախտաբար, հայկական կողմը նոյնիսկ սկսած այս նախագիծի թեքնիք հիմնաւորման աշխատանքներուն», յայտնեց Ամիրպէրով:

Միացեալ Նահանգներ կ'աջակցին Հայաստանի զինեալ ուժերու տասնապետական դասի կատարելագործման

Միացեալ Նահանգներու Եւրոպական հրամանատարութեան Դիմատետրի Էջին վրայ տեղադրուած յայտարարութեան մէջ կը նշուի, թէ Միացեալ Նահանգները կ'աջակցին Հայաստանի զինեալ ուժերուն՝ տասնապետական (սերժանթ) դասի կատարելագործման, քաղաքականութեան ձեւաւորման եւ նախնական մշակման աշխատանքներու կազմակերպման:



«Վերջերս Հայաստան էր Միացեալ Նահանգներու Եւրոպական հրամանատարութեան գլխաւոր աւագ տասնապետ Ռապըրթ Ապըրնէթին՝ աջակցելու Հայաստանի զինեալ ուժերու տասնապետական դասի կատարելագործման, քաղաքականութեան ձեւաւորման եւ նախնական մշակման աշխատանքներուն», կը նշուի վերոնշեալ յայտարարութեան մէջ:

Պէյրութի մէջ սպաննուեցաւ «Համաս»-ի ղեկավար մը

Մինչ Պէյրութի հարաւային արուարձանները կը պատրաստուէին «Հըզպալլա»ի ընդհանուր քարտուղար սէյիտ Հասան Նաւարալլայի արտասանելիք ճառին, Երեքշաբթի օր, Նոյն վայրը թատերաբեմ դարձաւ իսրայէլեան օդուծին ռմբակոծումին: Ջոհը պաղեստինեան «Համաս»ի քաղաքական խորհուրդի փոխնախագահ Սալէհ Արուրին էր:

Արուրի, որ նաեւ պաղեստինեան «Քասսամ» փաղանգի հիմնադիրն է եւ կը նկատուի 7 Հոկտեմբերին գործադրուած «Աքսայի ջրիւղեղ» գործողութեան հեղինակը՝ կը փնտռուէր իսրայէլեան իշխանութիւններուն կողմէ:

Երեկոյեան ժամը 6ին, մեծ պայթում մը ցնցեց հարաւային արուարձանները. վայրկեաններ ետք ի յայտ եկաւ, թէ իսրայէլեան անօդաչու թռչող սարք մը թիրախ դարձուցած է Մշարաֆիէի մէջ գտնուող շէնքի մը այն յարկերը, որոնք կը պատկանէին «Համաս» շարժումին, եւ որոնցմէ մէկուն մէջ կը գտնուէր Արուրին:

Քաղաքացիական պաշտպանութեան ուժերը, բանակը եւ ներքին ապահովութեան ուժերը փութացին դէպքին վայրը՝ փրկարար աշխատանք կատարելու եւ հակակշիռի տակ առնելու համար կացութիւնը:

Մինչեւ երեկոյեան ժամը 8, ռմբակոծումին պատճառով արձանագրուած զոհերուն թիւը բարձրացաւ 8ի. արձանագրուեցան նաեւ տասնեակ մը վիրաւորներ:

«Համաս»ը պաշտօնապէս հաստատեց Արուրիի սպանութիւնը՝ աւելցնելով նաեւ, որ անոր հետ զոհուեցան նաեւ «Քասսամ» փաղանգի երկու բարձրաստիճան գինուորականներ:

Իսրայէլեան պատկերասփիւռի կայանները հաղորդեցին, թէ իսրայէլացի պատասխանա-



տուներ հաստատեցին, որ 2006ի պատերազմէն ի վեր իսրայէլեան օդուծը առաջին անգամ ըլլալով է, որ կը ռմբակոծէ Պէյրութը, սակայն Իսրայէլի վարչապետի խորհրդական Մարք Ռեկեյ յայտնեց, որ Իսրայէլ Պէյրութի վրայ գործուած յարձակումին պատասխանատուութիւնը չէ ստանձնած՝ աւելցնելով, որ այդ յարձակումը Լիբանանի կառավարութիւնը կամ «Հըզպալլա»ն թիրախ չէ դարձուցած:

Լիբանանի վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքթաթ խստօրէն դատապարտեց ռմբակոծումը՝ հաստատելով, որ այդ մէկը արարք մըն է, որ կը միտի Լիբանանը փոխադրել ճակատումներու նոր փուլ մը: «Այս ռմբակոծումը կը միտի Լիբանանը ներգրաւել Կազայի պատերազմին մէջ եւ ջրել այդ պատերազմէն Լիբանանը հեռու պահելու իմաստով մեր գործադրած բոլոր ջանքերը», ըսաւ ան:

Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը եւս խստօրէն դատապարտեց Արուրիի սպանութիւնը՝ հաստատելով, որ «սիոնական գոյացութիւնը» (Իսրայէլ) կը կրէ իր գործած նոր արկածախնդրութեան պատասխանատուութիւնը:

«Հայաստանի տարածքին մէջ որեւէ կապ պէտք է գործէ այդ երկրի ինքնիշխանութեան տակ». Իրանի դեսպան

Հայաստանի տարածքին մէջ արտատարածքային միջանցքի մը հարցի արծարծումը որեւէ աղերս չունի միջազգային իրաւունքի, երկիրներու տարածքային ամբողջականութեան եւ ազգային ինքնիշխանութեան հետ: Ըստ «Արմենիափրես»-ի «Լուրեր»-ուն տուած հարցազրոյցին ընթացքին, այս մասին յայտարարեց Հայաստանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհտի Սոպհանի՝ պատասխանելով լրագրողին հարցումին, թէ այսպէս կոչուած «Ջանգեզուրի միջանցք»-ի ստեղծման մասին կը շարունակեն հնչել պահանջներ ոչ միայն Ատրպէյճանէն, այլ նաեւ Թուրքիայէն, ինչ դիրքորոշում ունի Իրանը արտատարածքային միջանցք ենթադրող թէգերուն շուրջ:



Սոպհանի շեշտեց, որ այլ երկրի մը տարածքին մէջ արտատարածքային միջանցքը որեւէ իմաստ չունի, իսկ իւրաքանչիւր երկրի հաղորդակցութեան ուղիները կը գտնուին այդ տարածքին մէջ ինքնիշխանութիւն ունեցող պետութեան ձեռքը:


«Կը կարծեմ, թէ, ինչպէս նշուած է Հայաստանի վարչապետին «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագիրին մէջ, Հայաստանի տարածքին մէջ տարածքային որեւէ կապ պէտք է գործէ այդ երկրի ազգային ինքնիշխանութեան տակ: Այն երկիրները, որոնք կը խօսին Հայաստանի տարածքին մէջ արտատարածքային միջանցքի մը մասին, պատրաստ են արդեօք իրենց տարածքին մէջ ստեղծել նման արտատարածքային միջանցքներ: Կը կարծեմ, որ պատասխանը բացասական է: առ այդ, ինչ որ իրենց համար չեն փափաքիր, ուրիշներուն համար ալ պէտք չէ փափաքին», ըսաւ Սոպհանի:

Ան նաեւ նշեց, որ Իրանի դիրքորոշումը չէ փոխուած այս հարցին մէջ. իրենք դէմ են տարածաշրջանին մէջ սահմաններու եւ աշխարհաքաղաքական փոփոխութիւններուն:

«Սահմաններու փոփոխութիւնը մեզի համար կարմիր գիծ է. ասիկա յայտարարուած է Իրանի բարձրագոյն իշխանութիւններու մակարդակով, եւ ոչ ոք կրնայ փոխել այդ մէկը», եզրափակեց Սոպհանի:

Իրանի արտաքին նախարարը հերքած է՝ Մեծամորը չ'աղտոտէ Արաքսը

Իրանի արտաքին նախարար Հոսէյն Ամիր Ապտոնլու-հեան հերքած է այն հաղորդագրութիւնները, թէ Հայաստանի Մեծամորի աթոմակայանը շողարձակ նիւթերով կ'աղտոտէ սահմանային Արաքս գետը: Tasnim գործակալութիւնը մէջբերած է անոր խօսքերը. «Իրանի աթոմային ուժանիւթի կազմակերպութիւնը հերքած է Մեծամորի աթոմակայանի շահագործման հետեւանքով Արաքս գետի որեւէ աղտոտում»: Յիշեցնենք, որ սա առաջին դէպքը չէ, երբ իրանեան կողմը կը հերքէ Արաքսի շողարձակ նիւթերով աղտոտման մասին պնդումները Մեծամորի աթոմակայանի թափոններով՝ պատասխանելով, մասնաւորապէս, մամուլի հրապարակումներուն, թէ շողարձակ նիւթերով աղտոտման պատճառով, ամենայն հաւանականութեամբ, Հայաստանէն Իրանի հիւսիսը աճած է քաղցկեղային հիւանդութիւններու թիւը:



Քոփիրքին. «Ռուսիան Հայաստանը չի մեղադրեր ուղղութիւնը փոխելու մէջ՝ հասկնալով, որ Հայաստան անկախ պետութիւն է»

Ռուսիան կը տեսնէ, որ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը կը վերաճեցնէրպոյ՝ հակառակ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի հաաստումներուն, որ Երեւանը իր արտաքին քաղաքական ուղղութիւնը չի փոխեր: Հայաստանի պետական պատկերասփիւռի կայանին տուած հարցազրոյցին մէջ այս մասին յայտարարած է Հայաստանի Հանրապետութեան մէջ Ռուսիոյ դեսպան Սերկէյ Քոփիրքինը՝ մեկնաբանելով Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի խօսքերը Հայաստանի եւ ՆԱԹՕ-ի գործակցութեան աշխուժացման մասին:

Քոփիրքին կը նշէ, որ ռուսական կողմը այդ վերաճեցնէրպոյ կը տեսնէ այլ կեդրոններու հետ Հայաստանի յարաբերութիւններու զարգացման մէջ, ինչ որ, ի հարկէ, վատ չէ:

«Ռուսիոյ, սակայն, կը մտահոգէ այն, որ հաւաքական Արեւմուտքը եւ Միացեալ Նահանգները Ռուսիան հռչակած են իրենց ռազմավարական մրցակից եւ նոյնիսկ թշնամի, ինչի մասին կը խօսին որոշ պաշտօնատարներ:

«Եւ այստեղ բազմաթիւ պաշտօնատարներ բացայայտօրէն յառաջ կը մղեն իրենց գիծը՝ խթանելով համագործակցութիւնը Ռուսիոյ դէմ պայքարի ոգիով: Եթէ այդ տեսանկիւնէն կը դիտուին Արեւմուտքի հետ յարաբերութիւնները, ապա Ռուսիան կրկնակի զգուշատր կը վերաբերի ատոր», նշեց դեսպանը:

Ըստ անոր, Ռուսիան կը տեսնէ, որ Արեւմուտքի նպատակը Ռուսիոյ դէմ պայքարին է բոլոր ճակատներով՝ ըլլայ այդ Հարաւային Կովկասը, թէ այլ շրջաններ:

«Ռուսիան Հայաստանը չի մեղադրեր արտաքին քաղաքական ուղղութեան փոփոխութեան մը մէջ՝ հասկնալով, որ Հայաստանը անկախ պետութիւն է եւ իրաւունք ունի որոշելու իր քաղաքականութիւնը», նշեց Քոփիրքին:

Դեսպանը շեշտեց, որ մտահոգութիւնը բնական է՝ հաշուի առնելով Արեւմուտքի կողմէ Ռուսիոյ պարտադրուած ճակատումը: Դիւանագէտը ընդգծեց, որ այսուհետեւ Ռուսիան կը շարունակէ Հայաստանը նկատել ռազմավարական դաշնակից:

Մեկնաբանելով «Սփութիք Արմենիա» ձայնասփիւռի կայանին շուրջ ստեղծուած կացութիւնը՝ դեսպանը յայտարարեց. «Հայ-ռուսական յարաբերութիւններուն մէջ գոյութիւն ունեցող կացութիւնը կը բնութագրուի ուժեղ զգացական ենթահողով, սակայն կարեւոր է թացը չորէն զանազանել եւ չյանձնուիլ այդ զգացումներուն»:

Ան ընդգծեց, որ կրնան ըլլալ զգացական պոռթկումներ, առանձին անհատներու յայտարարութիւններ, կրնան ըլլալ անձնական գնահատականներ, որոնք չեն նպաստեր երկկողմանի յարաբերութիւններու առողջացման: Դիւանագէտը, սակայն, կը կարծէ, որ պէտք չէ անոնց չափազանց մեծ նշանակութիւն տալ: Անհրաժեշտ է յստակ առանձնացնել մարդոց անձնական կարծիքը, որ կրնայ ըլլալ յուզական եւ, հաւանաբար՝ անհասարակչի:

«Դուք ոչ մէկ օրինակ կը գտնէք, որ Ռուսիոյ նախագահը, անոր մամուլը քարտուղարը թէկուզ մէկ ոչ պատշաճ, ոչ կառուցողական որակում կատարած ըլլան Հայաստանի ղեկավարութեան նկատմամբ: Ես կը կարծեմ, որ մենք այնուամենայնիւ պէտք է առաջնորդուինք ատով», նշած է ռուս դիւանագէտը:

Քոփիրքինի կարծիքով՝ իրականութեան մէջ դիրքին կացութիւն չէ, զգացումները շիկացած են: Ասիկա իր բացատրութիւնը ունի. երկու երկիրներու յարաբերութիւնները պարզապէս միջպետական յարաբերութիւններ չեն: Կան որոշակի ակնկալութիւններ, կան կարծրատիպեր, համագործակցութեան, եղբայրական կապերու աւանդութիւններ: Այս բոլոր գործոնները չեն կրնար չազդել զգացական ենթա-



հողի վրայ:

«Կան որոշակի մտահոգութիւններ, թիրմացութիւններ: Ատիկա, բնականաբար, վատ է, սակայն ատիկա այն բանի հետեւանքն է, որ մարդկային բաղադրիչը յարաբերութիւններուն մէջ շատ ուժեղ արտայայտուած է: Մարդկային գործօնը առաւելութիւն է, սակայն երբեմն նման կացութիւններուն մէջ կրնայ այսպիսի զգացական պոռթկումներ յառաջանել», կը կարծէ դեսպանը:

Անոր համաձայն, այս շատ հակասական կացութեան մէջ շատ կարեւոր է թացը չորէն զանազանել: Պէտք չէ անտեսել նաեւ երկու երկիրներու յարաբերութիւններուն մէջ դուրսէն լրացուցիչ բարդութիւններ մտցնելու փորձերը:

Պատասխանելով այն հարցումին, թէ Ռուսիան Պաքոյի յարձակման պարագային պիտի օգնէ՞ Հայաստանին, Ռուսիոյ դեսպանը ըսաւ. «Ես հիմք չունիմ ըսելու, որ Ռուսիան կասկածի տակ պիտի դնէ Հայաստանի հետ իր դաշնակցային համաձայնութիւնները, սակայն իբրեւ դեսպան չեմ կրնար քննարկել նման զարգացումները»:

«Ռուսիան չէ հրաժարած եւ պիտի չհրաժարի Հայաստանի նկատմամբ ստանձնած դաշնակցային պարտաւորութիւններէն: Ես ոչ մէկ հիմք ունիմ պնդելու, որ Ռուսիան պիտի չկատարէ Հայաստանի հանդէպ իր դաշնակցային պարտաւորութիւնները: Կը կարծեմ՝ հիմա չափազանց կարեւոր է, եւ ատիկա կը բխի բոլորի շահերէն, որպէսզի կացութիւնը զարգանայ խաղաղ հունով, եւ հիմքեր ստեղծուին երկարատեւ խաղաղութեան համար», ըսաւ ան:

«Ի հարկէ, Ռուսիան միեւնոյն ժամանակ Հայաստանի կողմէ մեծ ցանկութիւն չի տեսնէր աշխատելու ռուսական բանակցային հարթակի վրայ», յայտնեց դիւանագէտը՝ շեշտելով, որ այնուամենայնիւ, Մոսկուան չի հեռանար շրջանէն, եւ անոր համար շրջանային խաղաղութիւնը չափազանց կարեւոր է:

Քոփիրքին նաեւ անդրադարձաւ այն հարցին, թէ ինչո՞ր որոշ ռուս պաշտօնատար անձեր եռակողմ յայտարարութիւնը չկատարելու մէջ կը մեղադրեն Հայաստանը եւ ոչ Ատրպէյճանը: Ան նշեց, որ ռուս պաշտօնատարներու ոչ բոլոր յայտարարութիւնները կը բխին Հայաստանի հասցէին կշտամբանքներու տրամաբանութենէն: Կան նաեւ դրական գնահատականներ, որոնք, ցաւօք, բաւարար չափով չեն լուսաբանուիր, ինչպէս եւ չի լուսաբանուիր Հայաստանի նկատմամբ ռուսական դիրքորոշման էութիւնը: «Շարունակելով կշտամբանքներու նիւթը՝ նշեմ, որ կ'արժէ հաշուի առնել նաեւ Հայաստանի մէջ անհատներու կողմէ Ռուսիոյ հասցէին հնչող լուրջ քննադատութիւններն ու մեղադրանքները: Փորձ կը կատարուի Ռուսիոյ վրայ բարդել ողբերգութիւններու եւ անյաջողութիւններու համար պատասխանատուութիւնը: Ի հարկէ, Մոսկուան ինք իր վրայէն չի վերցնէր շրջանին մէջ տեղի ունեցող հոլովոյթներուն համար պատասխանատուութիւնը», նշեց Քոփիրքին:

Անոր համաձայն, Ռուսիան պատասխանատու դերակատար է եւ կարելիութեան սահմաններուն մէջ ամէն ինչ կ'ընէ հիմնական խնդիրները լուծելու, մագլցում չարտօնելու համար:

Իրանի նախագահը յետաձգեց Թուրքիա ուղեւորութիւնը

Նախագահ Իպրահիմ Ռայիսի պաշտօնական այցով՝ 4 Յունուարի առաւօտեան, պիտի ժամանէր Թուրքիա՝ բարձրաստիճան քաղաքական եւ տրնտեսական պատուիրակութեան մը ուղեկցութեամբ: Նախատեսուած էր Իրանի եւ Թուրքիոյ համագործակցութեան բարձրագոյն խորհուրդի ութերորդ նիստի գումարումը՝ երկու երկիրներու նախագահներուն գլխաւորութեամբ: Սակայն երկրի հարաւ-արեւելքը գտնուող Քերման քաղաքին մէջ պատահած ահաբեկչական յարձակումէն ետք, որուն զոհերու թիւը ըստ հաղորդագրութիւններու, գերազանցած է հարիւրը, ան յետաձգած է ուղեւորութիւնը աւելի յարմար ժամանակի մը:



Πρωτοχρονιάτικα έθιμα της Αρμενίας



Από όλες τις γιορτές του χρόνου, η Πρωτοχρονιά είναι η πιο αγαπημένη γιορτή των Αρμενίων. Τα μηνύματα αγάπης και γενναιοδωρίας κατακλύζουν και ζεσταίνουν τις καρδιές μας. Μας αφήνουν όμορφες αναμνήσεις, και το σημαντικότερο, την ελπίδα για να πραγματοποιηθούν οι ευχές μας. Θα κάνουμε μια μικρή αναφορά σε μερικά από τα έθιμα των προγόνων μας, που οι ρίζες τους πηγαίνουν βαθιά μέσα στους αιώνες.

Πρωτοχρονιά

Σύμφωνα με παλιό αρμενικό ημερολόγιο, η πρώτη μέρα του χρόνου ονομαζόταν «Ναβασάρτ», από το νάβα=νέος και σαρίτα=χρονιά, και εορταζόταν στις αρχές του Αυγούστου στην ύπαιθρο με χορούς, τραγούδια, ιπποδρομίες και παιχνίδια, ως έκφραση ευγνώμοσύνης για την πλούσια συγκομιδή. Στο πέρασμα του χρόνου, ο δημόσιος χαρακτήρας των εορτών εξέλειψε και ο κόσμος άρχισε να γιορτάζει την Πρωτοχρονιά στο σπίτι με την οικογένειά του. Με τη δημιουργία του ιουλιανού ημερολογίου, η 1η Ιανουαρίου καθιερώθηκε ως Πρωτοχρονιά. Το «Ναβασάρτ» έδωσε τη θέση του στο «Γκαγάντ», που σημαίνει «καλώ την έλευση του νέου έτους».

Το τραπέζι των εορτών

Στο πρωτοχρονιάτικο τραπέζι υπήρχαν 7 είδη γευμάτων, που συνήθως περιελάμβαναν αποξηραμένα φρούτα και ξηρούς καρπούς, όπως σταφίδες, σύκα, φουντούκια, ρόδια, αμύγδαλα, φιστίκια και χουρμά. Τα γεύματα ήταν το «χαρισά», ντολμά, σουσέπες, «τοπίκ» (ζυμωμένες μπαλίτσες με καρύδια και ρεβίθια), «γκοργκόρ» (είδος πιλαφιού), παγάρτς και μπουρεκάκια. Για ποτά είχαν κρασί και ούζο, ενώ από γλυκά ξακουστά ήταν το «ανουσαμπούρ», το «ποκέγ» και το «γκατά». Το κύριο φαγητό της πρωτοχρονιάτικης τελετουργίας ήταν το «γκοργκόντ» ή αλλιώς το «κεασγκάν». Στις περιοχές του Γερεβάν το ονόμαζαν «χαρισά» (φαγητό με σιτάρι και κρέας). Όταν μαγειρεύαν το «χαρισά», δεν το ανακάτευαν με την κουτάλα, παρά μόνο το άφηναν σε χαμηλή φωτιά, γιατί έτσι η χρονιά θα κυλούσε ομαλά και χωρίς εμπόδια. Όλη η οικογένεια μαζευτόταν γύρω από το τραπέζι, το οποίο ήταν στολισμένο με κεριά. Ο γηραιότερος του σπιτιού έκανε πρόποση για την καλή χρονιά, ευχόταν να πραγματοποιηθούν οι ευχές όλων και στη συνέχεια η οικογένεια γευματίζε. Με το πέρασμα των ετών η Πρωτοχρονιά έγινε χριστιανική γιορτή και συνδέθηκε με την γέννηση του Χριστού. Η

Εκκλησία περιόρισε τις κοσμικές συγκεντρώσεις και καθιερώθηκε η νηστεία με λαδερά φαγητά και όσπρια. Τις ημέρες των εορτών, το έθιμο ήταν να φτιάχνουν ένα γλυκό, το «ανουσαμπούρ», το οποίο στόλιζε το αρμενικό τραπέζι, που παραμένει μέχρι σήμερα. Ένα γλυκό παραδοσιακό, μαγειρεμένο με σιτάρι, αποξηραμένα φρούτα και ξηρούς καρπούς. Οι παλαιότεροι, όταν έκαναν επισκέψεις, πήγαιναν το γλυκό αυτό για δώρο, ενώ όταν είχαν επισκέπτες στα σπίτια τους, ο γηραιότερος του σπιτιού προσέφερε για δώρο κόκκινο μήλο, μέσα στο οποίο έβαζαν χρήματα, ή προσέφεραν ψωμάκια με μορφές ανθρώπων.

Παρασκευή παραδοσιακών ψωμιών

Στις 31 Δεκεμβρίου, σε κάθε σπίτι, ζύμωναν ψωμί σε μεγάλες ποσότητες, το οποίο συμβόλιζε την αφθονία. Το ονόμαζαν «το ψωμί του νέου έτους». Οι αρμένιοι ζύμωναν και το «ψωμί της χρονιάς» (ένα επίπεδο ψωμί με γεύση τσουρεκιού), πάνω στο οποίο έβαζαν σταφίδες και καρύδια. Από πάνω έφτιαχναν έναν σταυρό με λωρίδες και χάραζαν το έτος της χρονιάς. Πολλές φορές, πάνω στο ψωμί απεικόνιζαν ουράνια σώματα, τον ήλιο, το φεγγάρι, τα άστρα, σύμβολα από τα προχριστιανικά χρόνια. Μέσα στο ψωμί έβαζαν ένα κέρμα και όποιος το κέρδιζε γινόταν ο τυχερός της οικογένειας και η οικογενειακή ευτυχία βασιζόταν σε αυτόν. Υπήρχαν κι άλλα είδη ψωμιών που ζύμωναν οι νοικοκυρές. Ψωμιά σε σχέδιο ψαλιδιού, με την ευχή να ξερκίσουν το κακό, και άλλα σε σχήμα πουγκιού, με την ευχή να έρθει η ευτυχία. Το πουγκί ήταν σημάδι ότι το νέο έτος θα έφερνε χρήματα, οι αγελάδες θα έδιναν άφθονο γάλα, τα ζώα θα ήταν υγιή και οι αποθήκες γεμάτες με σιτάρι. Επίσης, υπήρχε το έθιμο να φτιάχνουν γλυκά ψωμιά σε σχήματα ανθρώπων και σε σχήματα γεωργικών μηχανημάτων, πασπαλισμένα με σιτάρι, κριθάρι, σουσάμι, κάνναβη, για να υπάρχει αφθονία στα αποθέματα σιτηρών. Ακόμα και σήμερα, την περίοδο των εορτών, σε πολλά μέρη του κόσμου παρασκευάζονται παρεμφερή ζυμώματα και πίτες, τα οποία πασπαλίζονται με σουσάμι.

Έθιμα των υδάτων σε διάφορες περιοχές της Αρμενίας

Σε κάποια χωριά υπήρχε ο μύθος ότι το βράδυ της Πρωτοχρονιάς, στις 12 τα μεσάνυχτα, τα νερά των ποταμών σταματούσαν να κυλούν για ένα δευτερόλεπτο. Όποιος τύχαινε να περνά εκείνη τη στιγμή από εκεί και ζητούσε μια επιθυμία από το Θεό, αυτή η επιθυμία θα πραγματοποιούταν.

ούταν. Στην περίπτωση που έπινε από αυτό το νερό, θα πλούτιζε. Οι γυναίκες είχαν το έθιμο να γεμίζουν τις πηγές με σπόρους σιτηρών, ώστε το νέο έτος να φέρει αφθονία, κάποιοι έριχναν στα ποτάμια ψωμιά που απεικόνιζαν φιγούρες ανθρώπων και ήταν συνδεδεμένα με το κακό στοιχείο, ώστε να φύγει η δυστυχία. Από όλες αυτές οι τελετουργίες έχουν μείνει κάποια ελάχιστα απομεινάρια, τα οποία τα τηρεί μέχρι σήμερα η Αρμενική Εκκλησία. Κατά τη διάρκεια της λειτουργίας των Χριστουγέννων και της Βάπτισης, ο ιερέας ευλογεί το νερό και οι πιστοί παίρνουν το αγιασμένο νερό στα σπίτια τους.

Το Δέντρο των Χριστουγέννων

Η ιστορία του χριστουγεννιάτικου δέντρου αποτυπώνεται στα ειδωλολατρικά έθιμα της λατρείας των δέντρων. Οι Αρμένιοι θεωρούσαν τα δέντρα «σοσί», «παρντίν» και «γεγεβίν» ως δέντρα αιώνιας ζωής, τα οποία συμβόλιζαν τη λατρεία της φύσης, την ευημερία και την αφθονία. Στόλιζαν τα κλαδιά του χριστουγεννιάτικου δέντρου με μήλα, ρόδια και βελανίδια. Επίσης, κρεμούσαν κόκκινες κορδέλες, όπου το κόκκινο συμβόλιζε τον ήλιο και την άνοδο, με την ευχή ότι οι κόκκινες, οι χαρούμενες και οι τυχερές μέρες θα είναι πολλές, όπως επίσης και διάφορα χρωματιστά υφάσματα, κάνοντας ευχές για υγεία, ευημερία και ειρήνη.

Κάλαντα – Δώρα

Το βράδυ της Πρωτοχρονιάς, μικρά παιδιά περιφέρονταν από σπίτι σε σπίτι και τραγουδώντας γιορτινά τραγούδια, περίμεναν δώρα. Έδεναν με σκοινί τις μακριές και πλεκτές κάλτσες τους, τις οποίες τις κατέβαζαν από τις καμινάδες στα σπίτια. Οι σπιτονοικοκυρές, με μεγάλη χαρά, γέμιζαν τις κάλτσες. Τα παιδιά με προσμονή περίμεναν τα φαγώσιμα και ζαχαρωτά δώρα τους... «Δώστε σταφίδες να ισώσω τα δόντια μου, δώστε καρύδια για να τα βάλω στο μέτωπό μου, δώστε ζάχαρη για να πιω τσάι, δώστε φουντούκια για να χαρεί η καρδιά μου». Το ίδιο βράδυ, οι αρμένιοι νέοι τραγουδώντας και χορεύοντας, χτυπούσαν τα κουδούνια για να λάβουν τα πρωτοχρονιάτικα δώρα τους. Σε κάποια μέρη της Αρμενίας, την ημέρα των Χριστουγέννων, στις 6 Ιανουαρίου, μετά τη λειτουργία στις εκκλησίες, οι μαθητές μαζί με τον δάσκαλό τους επισκέπτονταν τα σπίτια για να τραγουδήσουν τα αρμενικά κάλαντα. Κατέβαζαν από τις καμινάδες και τις ταράτσες τις τσάντες τους και ξεκινούσαν να τραγουδάνε τα αρμενικά κάλαντα, το «Αβεντίς». Οι νοι-

κοκυρές γέμιζαν τις τσάντες των παιδιών με αυγά, βούτυρο και καβουρμά.

Ευχές

Από παλιά, οι άνθρωποι πίστευαν ότι η ευχή που θα ακουστεί την Πρωτοχρονιά θα πραγματοποιηθεί ή θα ισχύει για όλη τη χρονιά. Το βράδυ της Πρωτοχρονιάς, ο γηραιότερος του σπιτιού έκανε την πρόποση, ευλογούσε το τραπέζι και μοίραζε ευχές, ζητούσε από τους παρευρισκόμενους του σπιτιού, μαζί με το πρώτο ποτήρι, να δοκιμάσουν το μέλι. Η ευχή αυτή είναι ένα είδος προσευχής, η οποία απευθύνεται στο Θεό. Στην πόλη Βαν έλεγαν την ευχή «να γευτούμε γλυκό μέλι για να συζητάμε γλυκά μέσα στο χρόνο, να ακούμε γλυκά και να συμπεριφερόμαστε γλυκά». Στην Κιλίκια έλεγαν «αλληλούια, αλληλούια, έφυγε ο παλιός χρόνος και έρχεται ο καινούριος, ας αποχαιρετήσουμε το παλιό έτος με χαρά, για το νέο έτος προετοιμαστείτε, ζητήστε ό,τι θέλετε και η επιθυμία όλων θα πραγματοποιηθεί, να μείνετε απονήρευτοι». Σε κάποιες περιοχές, το πρωί της Πρωτοχρονιάς, ο κόσμος πήγαινε στην εκκλησία για να παρακολουθήσει την πρώτη λειτουργία της χρονιάς. Επέστρεφαν στα σπίτια τους, αντάλλαζαν ευχές και ευλογούσαν τα ζώα και τα πουλιά που είχαν. Υπήρχε επίσης το έθιμο να επισκέπτονται τον ιερέα τους, πηγαίνοντάς του όσπρια, σουσέπες, τηγανητά ψωμάκια ή χαλβά, ευχόμενοι τα χρόνια πολλά.

Πρωτοχρονιάτικα έθιμα, παραδόσεις και προκαταλήψεις

Η καθαριότητα του σπιτιού ήταν σημαντική, όπως επίσης και η κάθαρση της ψυχής και του σώματος. Πίστευαν ότι η κάθαρση της ψυχής θα είναι η λύτρωσή τους. Σε περίπτωση που ανάμεσα στα μέλη των οικογενειών τους είχαν γίνει παρεξηγήσεις, έλυναν τις διαφορές τους. Οι πρόγονοί μας πίστευαν ότι η χρονιά θα ήταν επιτυχημένη και ο χειμώνας σύντομος, εάν η Πρωτοχρονιά δεν έπεφτε Τετάρτη ή Παρασκευή. Τα μεσάνυχτα της Πρωτοχρονιάς ηκούσαν οι καμπάνες της εκκλησίας, ακολουθούσε καταιγισμός πυροτεχνημάτων και οι χωρικοί άνοιγαν τις πόρτες για να διώξουν το κακό και να υποδεχτούν τα καλά του νέου έτους. Επίσης, κατά τη διάρκεια της νύχτας, οι γονείς άφηναν ξάγρυπνα τα παιδιά τους, ακόμα και τα μωρά τους, γιατί ο μύθος έλεγε ότι το ίδιο βράδυ τα σκιάχτρα γυρνάνε από σπίτι σε σπίτι και κλέβουν τα μωρά. Ετοίμαζαν πλουσιοπάροχα τραπέζια, περίμεναν καλεσμένους, αντάλλαζαν ευχές και δώρα.

Η σύγχρονη εποχή

Την εποχή μας οι παραδόσεις δεν έχουν αλλάξει πολύ. Οι Αρμένιοι παίρνουν τις διακοπές τις Πρωτοχρονιάς στα σοβαρά και προετοιμάζονται για αυτές από τις αρχές του Δεκεμβρίου κάθε έτους. Οι οικοδοσπότες αρχίζουν να εφοδιάζονται με προϊόντα για το τραπέζι της Πρωτοχρονιάς, ετοιμάζουν το μενού και σχεδιάζουν τη διακόσμηση της Πρωτοχρονιάς. Παραδοσιακά, οι Αρμένιοι γιορτάζουν την Πρωτοχρονιά στο σπίτι. Αμέσως μετά το χτύπημα του ρολογιού, ο μεγαλύτερος στην οικογένεια φιλοξενεί φίλους και συγγενείς. Αυτή η παράδοση της επίσκεψης σε φίλους και μέλη της οικογένειας την παραμονή της Πρωτοχρονιάς έχει τον σκοπό της. Σύμφωνα με την παράδοση, όλες οι

αρνητικές σκέψεις μένουν πίσω και όλες οι προσβολές συγχωρούνται. Η παράδοση της φιλοξενίας και της επίσκεψης σημαίνει ότι συγχωρείς και ζητάς συγγνώμη. Το κύριο στοίχημα της Πρωτοχρονιάς είναι το παραδοσιακό γιορτινό τραπέζι – όσο πιο πλούσιο είναι, τόσο πιο επιτυχημένη θα είναι η επόμενη χρονιά. Πολλά παραδοσιακά εορταστικά πιάτα είναι απαραίτητα στο γιορτινό τραπέζι. Το κυριότερο πιάτο είναι το παραδοσιακό ντολμά με αμπελόφυλλα. Σημαντικά στοιχεία του πρωτοχρονιάτικου τραπέζιού είναι τα αποξηραμένα φρούτα, το γκατά (Αρμενικό γλυκό), παραδοσιακός παστουρμάς και σουτζούκι, καθώς και το αρμενικό κονιάκ και το κρασί.

(Πηγή: Κρατική ραδιοφωνία της Αρμενίας)

Τα αρμενικά κάλαντα των Χριστουγέννων, ένα έθιμο που δεν πρέπει να εκλείψει

Η αρμενική παροιμία της Ελλάδας ίσως είναι από τις λίγες, αν όχι η μοναδική, που διατηρεί το έθιμο των αρμενικών καλάντων στις 5 Ιανουαρίου, την παραμονή των αρμενικών Χριστουγέννων. Ένα έθιμο, το οποίο πηγάζει βαθιά πίσω στις προηγούμενες δεκαετίες, όταν ακόμα υπήρχαν τα προσφυγικά παραπήγματα που έσφυζαν από ζωή. Την παραμονή των Χριστουγέννων, ομάδες νέων επισκέπτονται τα σπίτια των συμπατριωτών μας και ψέλνουν τον παραδοσιακό ύμνο «Χορούρτ Μετζ». Κάθε σπίτι υποδέχεται με θερμή τις ομάδες, με κεράσματα και ευχές, καθιστώντας το έθιμο αυτό σαν ένα από τα πιο παραδοσιακά που διατηρούνται στους κόλπους της παροικίας.



Μάλιστα, τα παλαιότερα χρόνια στις προσφυγικές συνοικίες, ήταν τόσα πολλά τα σπίτια των Αρμενίων, που ήταν αδύνατο να τα επισκεφθούν ένα προς ένα. Έτσι, οι νέοι στέκονταν και τραγουδούσαν στην αρχή κάθε γειτονιάς, ο κόσμος έβγαине στους δρόμους για να ακούσει τα κάλαντα, κατόπιν ακολουθούσαν τα κεράσματα και έριχναν τον οβολό τους στους κουμπάρδες. Ήταν τόσο όμορφο το έθιμο, που ακόμα και οι Έλληνες κάτοικοι της γειτονιάς περίμεναν με ανυπομονησία να ακούσουν τις χριστουγεννιάτικες μελωδίες και να συμμετάσχουν με τη σειρά τους στο παραδοσιακό έθιμο.

Πολλά έχουν αλλάξει τις τελευταίες δεκαετίες. Ο σύγχρονος τρόπος ζωής, η μετεγκατάσταση πολλών Αρμενίων σε διάφορες περιοχές, μακριά από τους παραδοσιακούς θύλακες, η αφομοίωση και η λήθη, ολοένα και περισσότερο δυσκολεύουν την επίσκεψη στα σπίτια και τη διαιώνιση αυτού του ιδιαίτερου εθίμου. Σε πείσμα των καιρών, οι νέοι της αρμενικής παροικίας συνεχίζουν την παράδοση, σκορπώντας χαρά και ζεστασιά στα σπίτια.

Απόψε, ας ανοίξουμε διάπλατα τις πόρτες και τις καρδιές μας, και ας αφήσουμε το μελωδικό και χαρμόσυνο μήνυμα των Χριστουγέννων να δώσει πνοή στις εστίες μας.

Αζερμπαϊτζάν και ανθρώπινα δικαιώματα: μια δισεπίλυτη εξίσωση

Το 2023, η κατάσταση των ανθρωπίνων δικαιωμάτων στο Αζερμπαϊτζάν επιδεινώθηκε ακόμα περισσότερο. Καταπατούνται οι βασικές ελευθερίες στη χώρα και ο αριθμός των πολιτικών κρατουμένων έχει αυξηθεί. Αυτό αναφέρεται στην έκθεση που δημοσίευσε το Κέντρο Παρακολούθησης Πολιτικών Κρατουμένων. Ειδικότερα, επισημαίνεται η συνεχιζόμενη απαγόρευση της ελευθερίας των διαδηλώσεων, η άρνηση παροχής συγκατάθεσης σε διαδηλώσεις της αντιπολίτευσης, η διάλυση ειρηνικών διαδηλώσεων. Για παράδειγμα, οι αρχές του Μπακού δεν ενέκριναν μια φεμινιστική συγκέντρωση που είχε προγραμματιστεί για τις 8 Μαρτίου στο κέντρο της πρωτεύουσας, μια διαμαρτυρία των κατοίκων του χωριού Soyudlu στις 20 Ιουνίου, οι οποίοι διαμαρτύρονταν για τη μόλυνση του περιβάλλοντος από το ορυχείο χρυσού. Ταυτόχρονα, ορισμένα κόμματα της αντιπολίτευσης αντιμετώπισαν παράλογες απαιτήσεις κατά τη διάρκεια των ελέγχων των νομικών εγγράφων τους. Εν τω μεταξύ, ο Gubad Ibadoglu, ηγέτης του Κόμματος Δημοκρατίας και Ευημερίας του Αζερμπαϊτζάν, στον οποίο είχε απαγορευτεί η νομιμοποίηση του κόμματός του, συνελήφθη τον Ιούλιο του 2023 με κατασκευασμένες κατηγορίες. Στο τέλος του έτους, άρχισε η καταστολή των ανεξάρτητων μέ-



σων ενημέρωσης, με τη σύλληψη περίπου 10 δημοσιογράφων με κατασκευασμένες κατηγορίες. Η έκθεση αναφέρει επίσης τη κράτηση ακτιβιστών που συνελήφθησαν με την κατηγορία της διακίνησης ναρκωτικών: «Η κοινωνία των πολιτών έχει ουσιαστικά καταστραφεί, οι περισσότεροι ακτιβιστές και υπερασπιστές των ανθρωπίνων δικαιωμάτων έχουν μεταναστεύσει από το φόβο της σύλληψης, η τηλεόραση, το ραδιόφωνο και ο Τύπος βρίσκονται κάτω τον έλεγχο της κυβέρνησης, τα δικαστήρια υποτάσσονται στην πολιτική ελίτ και οι δικηγόροι που δεν υπακούουν στο καθεστώς στερούνται τις άδειες τους. Οι νέοι νόμοι ψηφίζονται από ένα κοινοβούλιο που υπάγεται στην εκτελεστική εξουσία και δεν εκφράζουν τα συμφέροντα του λαού. Οι μέθοδοι διακυβέρνησης στο Αζερμπαϊτζάν μοιάζουν όλο και περισσότερο με το καθεστώς του Πούτιν στη Ρωσία», καταλήγει η έκθεση.

Άρθρα - Γνώμη

Ο γαμπρός του Αλίεφ εκκενώνει ένα ολόκληρο χωριό για την επιχείρησή του

Του ΧΑΡΟΥΤ ΣΑΣΟΥΝΙΑΝ,
«The California Courier»



Corruption of the Aliyev family

Υπάρχουν ατελείωτα σκάνδαλα που αφορούν τη συμμορία του Αλίεφ στο Αζερμπαϊτζάν. Ο σημερινός Πρόεδρος Ιλχάμ Αλίεφ, ο οποίος κυβερνά τη χώρα με σιδερένια πυγμή από το 2003, ανέλαβε από τον πατέρα του Heydar Aliyev, που ήταν αρχηγός του κράτους από το 1993 έως το 2003. Για να διασφαλίσει ότι οι Αλίεφ θα κυβερνούν το Αζερμπαϊτζάν για πολλές γενιές, ο Ιλχάμ Αλίεφ έχει ορίσει τη σύζυγό του ως αντιπρόεδρο. Είμαι βέβαιος ότι αυτή θα χρίσει ένα από τα παιδιά της για να τη διαδεχθεί, παρατείνοντας έτσι τη δυναστεία των Αλίεφ στο Αζερμπαϊτζάν.

Το τελευταίο σκάνδαλο στο Αζερμπαϊτζάν αποκαλύφθηκε από τον Ardi Pulaj, το οποίο δημοσιεύτηκε για πρώτη φορά στο Abzas Media και αναδημοσιεύτηκε από το Globalvoices.org. Το άρθρο τιτλοφορείται, «Στο Αζερμπαϊτζάν, ένα ολόκληρο χωριό εκκενώθηκε για τον γαμπρό του Προέδρου».

Το χωριό Garachayli ανήκε αρχικά στον Μεγάλο Μουφτή του Αζερμπαϊτζάν, Allahshukur Pashazade — τον κορυφαίο μουσουλμάνο ιερωμένο του Αζερμπαϊτζάν, ο οποίος είχε μισθώσει τη γη στους χωρικούς. Στη συνέχεια, το 2007, το χωριό ενοικιάστηκε στη Shabran Agrocomplex LLC για 49 χρόνια και έπειτα η εταιρεία διέταξε τους χωρικούς να εκκενώσουν τη γη. Ένας από τους κατοίκους του χωριού, ο Tahir Rasulov, μήνυσε την εταιρεία για δωροδοκία. Όμως μετά από δύο χρόνια έχασε τη δίκη. «Με βασάνισαν, και με βασάνισαν πολύ. Με απείλησαν μέσω της αστυνομίας. Με έβγαλαν από το πατρογονικό μου σπίτι». Περικύκλωσαν το χωριό με συρμόνι φράχτη. «Τώρα κοιτάμε τα προγονικά μας εδάφη έξω από τα καλώδια», είπε ο Ρασούλοφ.

Ο ιδρυτής της Shabran Agrocomplex είναι το Baku Agropark, το οποίο ανήκει στον επιχειρηματία Samad Gurbanov, που είναι παντρεμένος με την Arzu Aliyeva, τη μικρότερη κόρη του προέδρου του Αζερμπαϊτζάν.

Η προσωπική επένδυση του Gurbanov ύψους 6,9 εκατομμυρίων δολαρίων στην εταιρεία συνδυάστηκε με ένα επιπλέον δάνειο 6 εκατομμυρίων δολαρίων για 10 χρόνια, με επιτόκιο 5% από το Κρατικό Ταμείο Ανάπτυξης Επιχειρηματικότητας.

Το άρθρο ανέφερε ότι «η εταιρεία του Γκουρμπάνοφ απαλλάχθηκε από την πληρωμή για την εγκατάσταση καλωδίωσης ηλεκτρικού ρεύματος κατά την κατασκευή του θερμοκηπίου, η οποία έγινε από μια εταιρεία με την επωνυμία Retro Holding, που ανήκει στον Arif Pashayev, πεθερό του Αλίεφ. Άλλες παρόμοιες ευνοίες περιελάμβαναν ευνοϊκά δάνεια για την ύδρευση του αγροτεμαχίου — όλα εις βάρος του κράτους».

Ο Shohrat Gardashaliyev, πρώην κάτοικος του χωριού Garachayli είπε: «Η παροχή φυσικού αερίου περνάει από εδώ, το Agropark, και δεν παρέχει αέριο στους κατοίκους. Δίνουν κοπριά στα χωράφια. Είναι αλήθεια, ξοδεύουν εκατομμύρια για κοπριά, αλλά οι άνθρωποι δεν έχουν τόσο αξία όσο η κοπριά. Δεν μπορούμε να φυτέψουμε τις καλλιέργειες μας εδώ. Δεν έχουμε γη, δεν έχουμε ιδιοκτησία. Αυτή είναι η γη των κατοίκων του χωριού, αλλά κοιτά, έχουν εισβάλει και την έχουν αφαιρέσει.... Απλώς, μου λένε «πέσε κάτω και πέθανε, άσε με να σε κλωτσήσω στο λαιμό και να πεθά-

νεις».

Ο Tahir Rasulov είπε: «Εδώ αναφέρονται ονόματα, αναφέρεται το όνομα του προέδρου, το όνομα της κυρίας Mehriban Aliyeva (αντιπρόεδρος και σύζυγος). Μόλις ένα από τα ζώα μας περάσει σε εκείνο το χωράφι, η διεύθυνση μας λέει ότι αυτό είναι το μέρος της κυρίας Mehriban. Έχει διορίσει λοιπόν η κυρία Mehriban εκπρόσωπο εδώ για να σκοτώσει, να χτυπήσει, να βασανίσει ή να απειλήσει τους πολίτες».

Δεδομένου ότι δεν υπάρχουν ευκαιρίες απασχόλησης για τους κατοίκους του χωριού, η μόνη δυνατότητα είναι να εργαστούν στο αγροτικό συγκρότημα που είτε αρνήθηκε να τους προσλάβει, είτε πρόσφερε μηνιαίο μισθό μόνο 200 δολάρια. Ένας χωρικός περιέγραψε την άθλια κατάσταση ως «σύγχρονη σκλαβιά».

Τα νομικά έγγραφα αναφέρουν ότι το Baku Agropark πλήρωσε «απίστευτα φθηνό ενοίκιο για τη γη που μίσθωσε στο χωριό Garachayli — ένα ετήσιο ενοίκιο 1.500 δολαρίων για 4.300 στρέμματα γης». Ο Ρασούλοφ είπε ότι πλήρωνε «ενοίκιο 45 δολαρίων ανά στρέμμα γης. Και όμως, το Baku Agropark πληρώνει λιγότερα από 2,2 δολάρια ανά στρέμμα».

Ο Samad Gurbanov είναι επίσης ιδιοκτήτης «του Baku Agropark Trading House, που ασχολείται με το χονδρικό εμπόριο φρούτων και λαχανικών. Ακόμα εδώ δραστηριοποιείται η Maxitrading LLC, που ασχολείται με την εισαγωγή και διανομή προϊόντων διατροφής, καθώς και αρκετές άλλες εταιρείες που ανήκουν στον Όμιλο Mirlex (Mirlex Development and Mirlex Construction LLC), οι οποίες ασχολούνται με την πώληση πυροσβεστήρων, την εγκατάσταση αυτόματων συναγερμών πυρκαγιάς, τη στάθμευση και τα συστήματα βιντεοεπιτήρησης. Τα γραφεία πολλών από τις εταιρείες του Samad Gurbanov βρίσκονται στο Port Baku Towers, ένα επιχειρηματικό κέντρο της αζερικής ελίτ, που ανήκει στην Pasha Holding [ανήκει στον πατέρα της κυρίας Aliyev]».

Όταν οι δημοσιογράφοι της Abzas Media προσπάθησαν «να μιλήσουν με τους διαχειριστές του αγροτεμαχίου στο Σαμπράν, η προσπάθεια αποδείχθηκε μάταια. Ο φύλακας δεν επέτρεψε την είσοδο στο τηλεοπτικό συνεργείο, που είπε ότι κανένας από τους διαχειριστές δεν ήταν στο συγκρότημα».

Δυστυχώς, «αφού οι κάτοικοι του χωριού αναγκάστηκαν να φύγουν, άφησαν πίσω τους το και νεκροταφείο του χωριού. Από τότε που χτίστηκε το συγκρότημα και καταλήφθηκε η γη τους, πρέπει να ζητήσουν άδεια από τη διεύθυνση του αγροτεμαχίου ακόμη και να επισκεφθούν τους τάφους των εκλιπόντων συγγενών τους».

Είναι πολύ τραγικό το γεγονός ότι μια κυβέρνηση που κερδίζει δισεκατομμύρια δολάρια ετησίως από τα τεράστια αποθέματα πετρελαίου και φυσικού αερίου της δεν είναι πρόθυμη να μοιραστεί ένα μικρό μέρος αυτού του πλούτου με τους φτωχούς χωρικούς στο Αζερμπαϊτζάν.

Հայագիտական բնոյթի նոր հատորներ

ՊԱՏՐԱՍՏԵՑ
ԳԵՈՐԳ ՆԱՐԵԿԱՆԻ (ԵԱԶԸՃԵԱՆ)


– Ալեքսանտր Նարեկ արքեպիսկոպոս, «Ս. Գրիգոր Նարեկացի. Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան – St. Gregory of Narek: Instruction on the Orthodox Faith and Virtuous and Pure Life», Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ու Երեւանի «Անկիմաքար» հրատարակչութեան համատեղ հրատարակութիւն, Երեւան, 2023, 314 էջ (17 x 24 սմ.) (Ս. Գրիգոր Նարեկացիի «Խրատ» երկը եւ անոր քննական վերլուծութիւնը) (երկլեզու՝ հայերէն եւ անգլերէն): Հրատարակուած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ի օրհնութեամբ եւ «ձօնուած է Ֆրանչիսկոս Պապին՝ յերախտագիտութիւն 2015 թուին Ս. Գրիգոր Նարեկացիին «Եկեղեցոյ Տիեզերական Վարդապետ» հռչակելուն):

– Ալեքսանտր Պենճամին Ֆ., «Արարատը Ամերիկայի մէջ – Ամերիկահայ մշակոյթն ու քաղաքականութիւնը 20-րդ դարուն» (Ararat in America: Armenian American Culture and Politics in the Twentieth Century), «Հայերը արդի եւ վաղ արդի աշխարհին մէջ» մատենաշար, մատենաշարի խմբագիր՝ Պետրոս Տէր Մաթոսեան, I. B. Tauris/Bloomsbury Publishing հրատարակչութիւն, Լոնտոն, 2023, 264 էջ (15,1 x 22,7 սմ.) (անգլերէն):

– Գրիգորեան Աշոտ Հայկազուն, «Հայ քրիստոնէական ճարտարապետութիւնը եւ նախաքրիստոնէական մշակոյթի ներգործութիւնը», հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի, խմբագիր՝ Մովսէս Նաճարեան, վերստուգող խմբագիր՝ Վիգէն Արդարեան, «Զանգակ – 97» ՍՊԸ-ի տպարան, Երեւան, 2023, 440 էջ (24 x 30,8 սմ.) (հարիւրաւոր լուսանկարներ, զարդանախշեր, ժայռապատկերներ, յատակագիծներ, տարբեր գծագիրներ, բառարան, ծանօթագրութիւններ, յապաւումներ, աղիւսակներ, օգտագործուած գրականութեան, էջատակ յղումներու գրականութեան, գծագիրներու, լուսանկարներու, պատկերներու, Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի հրատարակութեանց ցանկեր, հեղինակին կենսագրութիւնը): Լոյս տեսած է Ալեքսանդր Թամանեանի անուան ճարտարապետութեան ազգային թանգարան-ինստիտուտի գիտական խորհուրդին երաշխաւորութեամբ:

– Դալթեան Վարդուի (կազմող), «Վահան Թեքէեան. Յօդուածներ ժողովածու», Բ. հատոր, Երեւան, 2023 (1911-1920 տասնամեակին տարբեր պարբերականներու մէջ Վահան Թեքէեանի լոյս ընծայած յօդուածները, ծանօթագրութիւններ): Տպուած է Երեւանի «Վահան Թեքէեան կենտրոն» հիմնադրամի աջակցութեամբ:

– «Եղիշէ Չարենց. Մատենագիտութիւն», Ա. պրակ, գլխաւոր խմբագիր՝ Դալթե Գասպարեան, պատասխանատու խմբագիր՝ Հայկանուշ Դազարեան, «Անտարես» հրատարակչութիւն, Երեւան, 2023, 448 էջ + 16 էջ ներդիր (15 x 23 սմ.) (գլխաւոր եւ պատասխանատու խմբագիրներուն ներածական խօսքերը, Չարենցի հեղինակած, կազմած, խմբագրած, թարգմանած, անոր մասին լոյս տեսած գիրքերու մատենագիտութիւնը, վեր-



նագիրներու, անձնանուններու, համառօտագրութիւններու եւ յապաւումներու ցանկեր): Գիրքը հրատարակուած է ՀՀ. կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան աջակցութեամբ:

– Թաշճեան Վարդան, «Նամականի Յ. Գեղարդի հետ», Համագրայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 2023 (հեղինակին նամակագրութիւնը լիբանանահայ բժիշկ, գրող եւ խմբագիր Յարութիւն Գազանճեանի հետ):

– Թենպէլեան Վարուժ, «Լեւոն Շանթի անաւարտ ուղեւորութիւնը՝ մարդուն փնտռողը հայուն մէջ», «Արամ Մանուկեան» մատենաշար թիւ 9, Պէյրութ, 30 դեկտեմբեր 2023:

– Լոռենց Վահէ, «Հայաստանի մայրաքաղաքները», խմբագիր՝ Լիլիթ Անթանեսեան, հեղինակային հրատարակութիւն, Երեւան, 2023, 144 էջ (22,5 x 22,1 սմ.) (հակիրճ տեղեկութիւններ Հայաստանի արքայանիստ 38 ոստաններու մասին, մէկ սեւ-ճերմակ եւ գունաւոր բազմաթիւ լուսանկարներ):

– Կապուտիկեան Սիլվա, «Էջեր փակ գորոցներ», Բ. հրատարակութիւն, խմբագիրներ՝ Արմենուի Դեմիրճեան եւ Սէյրանուի Գեղամեան, հրատարակութիւն Սիլվա Կապուտիկեանի տուն-թանգարանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, Երեւան, 2023, 676 էջ (17,7 x 24,8 սմ.) (Ս. Կապուտիկեանի՝ հիմնականին մէջ չհրապարակուած

քաղաքական ելոյթները եւ յօդուածները, մասնաւորաբար Արցախեան շարժումին վերաբերեալ, նամակներ, դիմումներ, փաստաթուղթեր, հարցազրոյցներ, բանաստեղծութիւններ եւ այլ նիւթեր): «Գիրքը կազմուել է «Սիլվա Կապուտիկեան» գրական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ», հրատարակուած է «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձր հովանու ներքոյ»:

– Հարպոյեան Կարպիս, «Յիշատակութեան արժանի հայ բժշկուիներ պատմութեան ընթացքին», հրատարակութիւն Հայ օգնութեան միութեան (ՀՕՄ) Գանատայի շրջանային վարչութեան, Մոնրէալ, 2023 (43 անուանի եւ 13 բռնադատուած հայ բժշկուիներու հակիրճ կենսագրատու, լուսանկարներ): Հեղինակը գիրքը ձօնած է ՀՕՄ-ի Գանատայի մասնաճիւղին:

– Շահինեան Դալար, Գասպարեան Սօսի եւ Նալպանտեան Յօլին (խմբագիրներ), «Հայկական սփիւռքը եւ պետականագուրկ ուժը – Հաւաքական ինքնութիւնը անդրազգային 20-րդ դարուն մէջ» (The Armenian Diaspora and Stateless Power: Collective Identity in the Transnational Twentieth Century), վերջաբանները՝ Խաչիկ Թէօլեանի եւ Սեպուհ Ասլանեանի, «Հայերը արդի եւ վաղ արդի աշխարհին մէջ» մատենաշար, մատենաշարի խմբագիր՝ Պետրոս Տէր Մաթոսեան, I. B. Tauris/Bloomsbury Publishing հրատարակչութիւն, Լոնտոն, 2023, 313 էջ (15 x 23 սմ.) (գիտական յօդուածներու ժողովածու, առարկայացանկ, ծանօթագրութիւններ) (անգլերէն): Ժողովածուն նուիրուած է հայկական սփիւռքի ուսումնասիրութեանց հիմնադիր փրոֆ. Խաչիկ Թէօլեանին:

– Տէր Մինասեան Ռուբէն, «Հայաստանը եւ աշխարհաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում», աշխատասիրեց, յառաջաբանը հեղինակեց եւ գիրքը հրատարակութեան պատրաստեց՝ Խաչատուր Ստեփանեան, Երեւան, 2023 (ՀՅԴ Բիւրոյի երբեմնի անդամի երկու աշխարհաքաղաքական-վերլուծական ուսումնասիրութիւններ, հեղինակին լուսանկարն ու հակիրճ կենսագրութիւնը Դ. Կողբին վրայ): Հատորը լոյս տեսած է Հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմութեան եւ հասարակագիտութեան բաժանմունքի խորհուրդին երաշխաւորութեամբ:

– Տօնապետեան Յուսիկ, «Պէյրութի Հայ աւետարանական գոլէճը (1923-1953)», խմբագրեց եւ հրատարակութեան պատրաստեց՝ Արմէն Իրնէշլեան, Հայ աւետարանական գոլէճի հարիւրամեակի մատենաշար թիւ 2, տպագրութիւն Քեստենեան, Պէյրութ, 2023, 34 էջ (դպրոցի առաջին երեսնամեակի համառօտ պատմութիւնը, խմբագրի ծանօթագրութիւններ):

– Քարծայր Պետրոս, «Դրամ պիտի մուրամ եւ այս դպրոցը գոլէճ պիտի ընեն», խմբագրեց եւ հրատարակութեան պատրաստեց՝ Արմէն Իրնէշլեան, Հայ աւետարանական գոլէճի հարիւրամեակի մատենաշար թիւ 1, տպագրութիւն Քեստենեան, Պէյրութ, 2023, 20 էջ (Հ.Ա.Գ.-ի հիմքը կազմած Հայ մանչերու (բողոքական) երկրորդական վարժարանի հիմնադիր-տնօրէնի տեսլականը):



Ամանորեայ Գաթայի հաւաքոյթ Գոքինիոյ մէջ



Հ.Կ.Խաչի Գոքինիոյ «Սօսէ» մասնաճիւղի վարչութիւնը, Ս. Յակոբ եկեղեցոյ Թաղային խորհուրդը եւ Տիկնանց մարմինը միասնաբար կը կազմակերպեն Ամանորեայ գաթայի հաւաքոյթ **Երկուշաբթի, 15 Յունուար 2024-ին, Երեկոյեան ժամը 5-ին** Գոքինիոյ Ս. Յակոբ եկեղեցոյ սրահին ներս:

Գոքինիոյ հոգեւոր հովիւ Տէր Պարետ քին. Խաչերեան
պիտի խօսի «Ընտանեկան հաւաք» նիւթին շուրջ:

Ամանորեայ գաթան պիտի օրհնէ շրջանի հոգեւոր հովիւը:

Կը հրաւիրուին Շրջանային վարչութիւնը, քոյր մասնաճիւղերը եւ բոլոր փափաքող ազգայինները:



Թատրոնի երեկոյ



Հ.Կ.Խաչի Աթէնքի «Ծովինար» մասնաճիւղի վարչութիւնը կը կազմակերպէ թատրոնի երեկոյ **Կիրակի, 21 Յունուար 2024-ի Երեկոյեան ժամը 7:30-ին**, «Թրօսա Մէլզօնօս» թատերասրահին մէջ (Փիրէոս 254, Թատրոն):

Թատերարգութեան նիւթը՝
«Το Μυστικό της Κοντέσσας Βαλέραϊνας»:
Արձանագրութիւններու համար հեռաձայնել հետեւեալ ընկերուիներուն՝ Հայկան Իթիւճիան 6981094360 եւ Ռիթա Հալաճեան 6976355226:
Մուտքի սակ՝ 30 եւրօ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ֆրանսիսկոս պապը ընդունեց Նարեկ արք. Ալեքմէզեանը

Գ.Դ.


Հինգշաբթի 7 Դեկտեմբեր 2023-ին, Կաթոլիկ աշխարհի Ս. Քահանայապետ Ֆրանսիսկոս Պապը Վատիկանի պապական նստավայրին մէջ ընդունեց Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան անդամ Նարեկ արք. Ալեքմէզեանը եւ անոր ընկերակցող ազգայինները:

Ջերմ ընդունելութեան ընթացքին Նարեկ արքեպիսկոպոս Ս. Քահանայապետին յանձնեց Ս. Գրիգոր Նարեկացիի «Խրատ ուղիղ հաւատքի եւ առաքինի մաքուր վարքի» գործի նորագոյն՝ գրաբար, աշխարհաբար եւ անգլերէն համատեղ հրատարակութիւնը, քննական աշխատասիրութեամբ հանդերձ, տպուած երեւան, 2023-ին, «Անկիւնաքար» հրատարակչատան կողմէ, մեկենասութեամբ Արմէն եւ Արտակ Տէօվլէթեան ընտանիքներու:

Այս հրատարակութիւնը աշխատանքի արգասիքն է Նարեկ սրբազանին, որ 1981-83-ին որպէս վարդապետական աստուածաբան պատրաստած էր զայն եւ 2002-ին որպէս գիրք հրամցուցած «հաւատացեալ ընթերցողին եւ հայ մատենագրութեամբ հետաքրքրուած բանասէրին» Ս. Գրիգոր Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան»-ի գրութեան 1000-ամեակին առթիւ»:

Անգլերէն թարգմանութեամբ համալրուած այս հրատարակութիւնը ձօնուած էր Ֆրանսիսկոս պապին, որպէս երախտագիտական արտայայտութիւն Ս. Գրիգոր Նարեկացիի Կաթողիկէ Եկեղեցւոյ կողմէ «Տիեզերական վարդապետ» հռչակման իր նախաձեռնութեան:

Սրբազան պապը անակնկալի եկաւ իրեն ձօնուած այս գրքին ի տես, իր շնորհակալութիւնն ու քաջալերանքը յայտնեց Նարեկ սրբազանին, իր



կարգին յիշատակի նուէրներ տալով Սրբազանին եւ անոր ընկերակիցներուն:

«Խրատ»-ի մասին

Նարեկ Արք. Ալեքմէզեան այս գրքի ներածականին մէջ կը նշէ հետեւեալ մասնաշաղկապները. «Առաջին, կը պարզաբանէ ուղղափառ հաւատքը եւ անոր դաւանութեան կը հրաւիրէ հայ հաւատացեալը՝ որպէս ճշմարիտ հետեւորդ Աստուծոյ՝ սուրբ եւ անբաժանելի Երրորդութեան:

Երկրորդ, կը մանրամասնէ Ընդհանրական եկեղեցիի վարդապետութեան կենսական երեսները՝ սուրբ մկրտութիւնը, սուրբ հաղորդութիւնը, ապաշխարութիւնը, մեռելներու յարութիւնն ու վերջին դատաստանը եւ երկինքի արքայութիւնն ու յափտենական կեանքը, որոնք Նիկիոյ Տիեզերական առաջին ժողովին մէջ (325 թ.) բանաձեւուեցան եւ մաս կազմեցին հաւատքի հանգանակին:

Երրորդ, կ'ընդգծէ ուղղափառ հա-

ւատքի եւ առաքինի գործերու փոխառնչութիւնը՝ որպէս քրիստոնէական կեանքի պտղաբերումին ամբողջացուցիչ տարր:

Չորրորդ, կը վերահաստատէ, որ մարդ բարոյական էակ մըն է՝ բանական, ցասմնական եւ ցանկական հակումներով առաջնորդուող, եւ ասոնց տրամաբանական հաւասարակշռոյթով միայն կրնայ իր աստուածահաճոյ եւ քրիստոսատիպ կեանքը ապրիլ՝ առանց տարութելու արդարութեան եւ անարդարութեան միջեւ:

Հինգերորդ, կ'ուրուագծէ հինգ զգայարաններու ըստ պատշաճի բացումներով եւ փակումներով պայմանաւորուած կեանք մը ապրելու հրամայականը՝ որպէս երկնաւոր Փեսային՝ Յիսուսի պարգեւած անզուգական փառքին ժառանգութեան նախապայման»:

Բովանդակութիւնը

«Խրատ»ը բաղկացած է 76 գլուխներէ, թուագրուած՝ հեղինակին կողմէ:

մէ: Իւրաքանչիւր գլուխով աստուածաբանական բացատրութիւններ կու տայ Եկեղեցւոյ, Ս. Երրորդութեան՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին, անոնց յատկութիւններուն, մկրտութեան, պատարագի, ապաշխարութեան եւ մեղքերու թողութեան, մեռելներու յարութեան եւ յափտենական դատաստանին մասին: Կարելի է զայն նկատել մեր Հաւատամքի մանրամասն մեկնաբանութիւնը:

Յաջորդող գլուխներուն մէջ կը խօսի մոլութիւններու եւ առաքինութիւններու մասին, կը նկարագրէ հինգ զգայարաններու յատկութիւնները, զանոնք բանալու եւ փակելու մասին մանրամասն օրինակներով խրատներ կու տայ, կը խօսի արեւոյնքութեան եւ որկրամոլութեան, կերակուրի տեսակներու եւ պահեցողութեան մասին: Խորհուրդ կու տայ ինչ բարի պարագաներու գործածել ձեռքերն ու ոտքերը եւ ի՞նչ պարագաներուն խուսափիլ զանոնք գործածել: Կը բացատրէ անհրաժեշտութիւնը հոգիի եւ մտքի մաքրութեան եւ մաքուր պահպանութեան:

Այս գիրքը կարդալէ ետք սպառնիք բացատրութիւններ կ'ունենանք Հայ Եկեղեցւոյ Հաւատամքի, մեղքերու տեսակներու եւ թողութեան մասին:

Կ'արժէ անպայման կարդալ. Նարեկացիի բնագիրը ընդամենը 65 էջերէ կը բաղկանայ՝ որուն կը յաջորդէ ուսումնասիրական բաժին մը՝ կարելի է մէկ շունչով կարդալ: Շատ դիւրին է կարդալ նաեւ անոնց համար, որոնք հայերէն կարդալու դիւրութիւնը չունին: Գլուխները կարճ են, կարելի է ամէն օր մէկ գլուխ կարդալ, այդպիսով զարգացնելով նաեւ հայերէնի ընթերցանութեան կարողութիւնը:

Յաւերժ փառք եւ խունկ Ս. Գրիգոր Նարեկացիին: Վարձքը կատար Նարեկ արք. Ալեքմէզեանին:



Եպիսկոպոսական հանդիսատար Սուրբ Պատարագ եւ մատաղօրհնութիւն Ֆիքսի Ս. Յովհ. Կարապետ եկեղեցւոյ անուանակոչութեան եւ հիմնադրութեան տօնին առիթով

Ի գիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին, կը հաղորդենք թէ, **Կիրակի 14 Յունուար 2024-ին**, Նէոս Գոգմոսի(Ֆիքս) Ս. Յովհ. Կարապետ եկեղեցւոյ մէջ, Եպիսկոպոսական հանդիսատար Սուրբ եւ Անմահ Պատարագի մատուցմամբ եւ անուանական Մատաղօրհնութեամբ պիտի տօնուի նորաշէն եկեղեցւոյ անուանակոչութեան եւ հիմնադրութեան 41-ամեակը:

Պիտի պատարագէ եւ իր Հայրական պատգամը փոխանցէ, Յունաստանի Հայոց թեմի բարեխնամ Առաջնորդ **Գերշ. Տ. ԳԵՂԱՍ Ս. ԱՐՔ. ԽԱՉԵՐԵԱՆ**

Սկիզբ Ս. Պատարագի՝ առաւօտեան ժամը 10:00-ին:

Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարուի եկեղեցւոյ դպրագոհասին կողմէ, դպրապետութեամբ՝ բարշ. Պետրոս սրկ. Պարսամեանի, եւ խնբավարութեամբ ու երգեհոնի ընկերակցութեամբ, երաժիշտ՝ բարշ. Կարօ կիսրկ. Պարտաքճեանի:

Պատարագի ավարտին, տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան յատուկ պաշտօն, եկեղեցւոյ հանգուցեալ քահանաներու, սարկաւազներու, դպիր-դպրուհիներու, ծառայողներու եւ բարերարներու յիշատակին:

Այս առթիւ, պիտի խնդրենք մեր ուխտաւոր ժողովուրդի զաւակներէն, փոխան մատաղի նուիրահաւաքի աշխատանքը դիւրացնելու համար, կապի մէջ մտնել մեզի հետ, ներքեւ յիշուած հեռաձայնի թիւերուն.՝

* արն. Նազարէթ Դալիթեան՝ 2109029443 եւ 6955043003

* տիկ. Արշալոյս Նաքու-Տրդատեան՝ 2109416584 եւ 6942214251

* տիկ. Հռիփսիմէ Գարամանեան՝ 2109320544 եւ 6932134121


ՀՈՎԻԹ ԹԱՂԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ՏԻԿՆԱՆՑ ՄԱՐՄԻՆ



Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան եկեղեցական արարողութեանց ժամանակացուցակ Թեսաղոնիկէի մէջ

Ուրբաթ, 5 Յունուար 2024 (Ճրագալոյց)

18:00-ին՝ Ժամերգութիւն
19:30-ին՝ Ս. Պատարագ
20:30-ին՝ Գաթայի բաշխում
21:00-ին՝ Աւետիսի շրջագայութիւն



Շաբաթ, 6 Յունուար 2024 (Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն)

09:30-ին՝ Ժամերգութիւն
10:30-ին՝ Ս. Պատարագ
12:00-ին՝ Զրօրհնէք

Կիրակի, 7 Յունուար 2024 (Յիշատակ Մեռելոց)

10:30-ին՝ Ս. Պատարագ

Երկուշաբթի, 8 Յունուար 2024 (Գերեզմանօրհնէք)

Հոգ. Հայր Սուրբը հետեւեալ ժամերուն պիտի գտնուի գերեզմանատուն.՝ 10:00-14:00, 16:00-18:00

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Ազատ Օր»-ի նոր սակագինը

2024-էն սկսեալ «Ազատ Օր»-ի հրատարակութեան նոր ձեւաչափի սակագինը ճշդուած է հետեւեալ կերպով.՝

* **Երկուշաբթիէն-Ուրբաթ** միայն էլեկտրոնային տարբերակը (PDF) ստանալու համար՝ տարեկան 120 եւրօ:

* **Ուրբաթ օրերը** միայն տպագիր թիւ ստանալու համար՝ տարեկան 120 եւրօ:

* **Երկուշաբթիէն-Ուրբաթ** տպագիր եւ էլեկտրոնային թերթը ստանալու համար՝ տարեկան 160 եւրօ:

Ձեր նախընտրութիւնը որոշելու կապակցութեամբ կը խնդրենք կապ հաստատել «Ազատ Օր»-ի խմբագրատան հետ՝ 210 9575011 հեռաձայնի թիւին, կամ էլեկտրոնային հասցէին միջոցով՝ azatordaily@gmail.com:

ՆՈՒՐԱՏՈՒՌԻՏԻՆ

Իրենց քրոջ եւ մօրաքրոջ՝ **ԱՐՇԱԼՈՅՍ ՏԻԱՐԵԱՆԻ** մահուան քառասունքին առիթով կը նուիրեն.

- Տիկին Արմինէ Տիարեան, պրն. Արամ Պուլոյեան, տէր եւ տիկին Կայծակ եւ Սիլվիա Խաչիկեան եւ զաւակները Օննիկ եւ Ճիւան Հ.Մ.Ը.Մ.ի Թեսաղոնիկէի մասնաճիւղի վարչութեան 100, Հ.Գթ. Խաչի Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Շրջանային վարչութեան 100, Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Տիկնանց միութեան 100, «Արմենիքա» պարբերաբերթին 100, «Ազատ Օր»ի ֆոնտին 100 եւրօ:
- Նոյն առիթով կը նուիրեն.
- Տիկին Լուսի Շանկայեան «Ազատ Օր»ի ֆոնտին 50 եւրօ:
- Սերճօ եւ Վերժին Եղիշէեան «Ազատ Օր»ի ֆոնտին 50 եւրօ:
- Ճուլիա Ճանիկեան «Արմենիքա» պարբերաբերթին 50 եւրօ:
- Արա եւ Լիզէթ Քիրազեան «Արմենիքա» պարբերաբերթին 50 եւրօ:
- Կարօ եւ Ժազլին Փաջաճեան Գոքինիոյ «Ջաւարեան» կեդրոնի խորհուրդին 50 եւրօ:
- Ազնիւ Շիրինեան Գոքինիոյ «Ջաւարեան» կեդրոնի խորհուրդին 30 եւրօ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Տիկին Արմինէ Տիարեան, պրն. Արամ Պուլոյեան, տէր եւ տիկին Կայծակ եւ Սիլվիա Խաչիկեան եւ զաւակները Օննիկ եւ Ճիւան, ինչպէս նաեւ Չամասեան, Տիարեան-Ստամպուլեան (Լոս Անճելըս), Տիարեան-Բրուտեան (Լոս Անճելըս), Ապրահամեան, Կուտլիճեան (Փարիզ) եւ Տողրամաճեան ընտանիքները կը ծանուցանեն թէ Կիրակի, 7 Յունուար 2024-ին, Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Սուրբ եւ Անմահ Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց քրոջ, մօրաքրոջ եւ ազգականին՝

ԱՐՇԱԼՈՅՍ ՏԻԱՐԵԱՆԻ

մահուան քառասունքին առիթով:
Հոգեսուրճ՝ Տէր Զաքարեան սրահին մէջ:



Ժամանակացոյց
Աստուածայայտնութեան
արարողութիւններու
Հայ Կաթողիկէ առաջնորդարան
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի

Շաբաթ, 06.01.2024՝ ՏՕՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ – ԶՐՕՐՀՆԷՔ
Առաւօտեան ժամը 10:30-ին Չայնաւօր Սուրբ Պատարագ, ապա Սուրբ Մկրտութեան արարողութիւն եւ Զրօրինէք: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ – Նէոս Գոգմոս:

Կիրակի, 07.01.2024՝ ՕՐ ՄԵՌԵԼՈՑ
Առաւօտեան ժամը 11-ին Սուրբ Պատարագ եւ հոգեհանգիստ, Սրբուհի Թերեզայի եկեղեցւոյ մէջ – Գոքինիա:

ՇՆՈՐՀԱՌՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻ

Հայր Յովսէփ Թ.Ծ.Վ. Պէզազեան
Առաքելական կառաւարիչ
Յունաստանի Հայ կաթողիկէ Համանքի



Ս. Ծննդեան տօնի Աթէնքի,
Գոքինիոյ եւ Նէոս Գոգմոս (Ֆիքս)ի
եկեղեցիներու
արարողութեանց ժամանակացոյց

Ս. Ծնունդի ճրագայոյց
Ուրբաթ, 5 Յունուար 2024-ի երեկոյեան ժամը 6:30-ին մարգարէութեանց ընթերցումներ եւ ժամը 7:00-ին, Ս. պատարագ եւ Ս. Ծննդեան նախատօնակ ու Աւետում:

Ս. Ծնունդ եւ կարգ մկրտութեան ու Աստուածայայտնութեան
Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Շաբաթ, 6 Յունուար 2024-ի առաւօտեան Ս. պատարագ եւ ապա Կարգ Մկրտութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:

* **Աթէնքի** Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցի ժամը 10:00-ին:

Պիտի պատարագէ եւ քարոզէ թեմիս բարեջան Առաջնորդ
գերշ. **Տ. ԳԵՂԱՄ Ս. ԱՐՔ. ԽԱԶԵՐԵԱՆ:**

* **Գոքինիա** Ս. Յակոբ եկեղեցի ժամը 9:30-ին:

* **Նէոս Գոգմոս (Ֆիքս)** Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի ժամը 10:00-ին:

Յիշատակ մեռելոց

Կիրակի, 7 Յունուար 2024-ի առաւօտեան Ս. պատարագ ապա հոգեհանգիստ:

Գոքինիա Ս. Յակոբ եկեղեցի ժամը 9:30-ին

Նէոս Գոգմոս (Ֆիքս) Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի ժամը 10:00-ին:

Գերեզմանօրինէք

Ս. Ծննդեան տօնի մեռելոցի օրուան առիթով, Գոքինիոյ ու Նէոս Գոգմոս (Ֆիքս)ի հոգեւոր հովիւները պիտի կատարեն գերեզմանօրինէք: Փափաքողները կրնան կապ հաստատել ժամադրութիւն ապահովելու համար:

ՅՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Աւետիսի շրջագայութիւն

Ֆիքսի եւ շրջակայքին մէջ

Տիքսի «Արամ Մանուկեան» ակումբին մէջ գործող միութիւնները կը ծանուցանեն, թէ **Ուրբաթ, 5 Յունուարի գիշերը**, պիտի կատարեն Աւետիսի շրջագայութիւնը միացեալ խումբերով՝ Նէոս Գոգմոս, Նէա Զմիռնի, Անօ Նէա Զմիռնի, Անօ Տաֆնի, Պրախամի, Քալիթէա, Փալէօ Ֆալիւրօ, Ալիմոս, Վուլա, Վարքիզա շրջաններուն մէջ:



Գոքինիոյ եւ շրջակայքին մէջ

«Ջաւարեան» կեդրոնին մէջ գործող միութիւնները (Հ.Կ.Խաչ, ՀՀ.Մ.Ը.Մ., Համագային եւ Հ.Յ.Դ. Երիտասարդական Միութիւն) կը ծանուցանեն, թէ **Ուրբաթ, 5 Յունուարի գիշերը**, պիտի կատարեն Աւետիսի շրջագայութիւնը միացեալ խումբերով՝ Նիթէա, Քորիտալոս, Փալէա Գոքինիա, Փիրէա, Քիֆիսիա, Էքալի, Նէա Էրիթրէա, Տրոսիա, Անիքսի, Ալիոս Սթեֆանոս շրջաններուն մէջ:



www.azator.gr
AZAD OR Armenian Daily Newspaper of Greece

ՀԵՔԿՏ ՕՐ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ

5-6 ՅՈՒՆՈՒԱՐ 1973

Օգտուելով յունաց Ծնունդի երկօրեայ դադարէն, Երիտասարդաց միութեան Յունաստանի բոլոր խումբերը, իրագործեցին ծրագրուած հանդիպումը Թեսաղոնիկէի մէջ, նախաձեռնութեամբ Թեսաղոնիկէի «Սողոմոն Թեիլիբեան» խումբին: Այսպէս, 25 Դեկտեմբերին, առաւօտեան ժամերուն, փոլման երեք ինքնաշարժներով ժամանեցին Աթէնքի խումբերէն 125 երիտասարդներ, ընկերակցութեամբ Երիտ. միութեան Կեդր. վարչութեան ներկայացուցիչներուն: Հիւրերը արժանացան Թեսաղոնիկէի երիտասարդութեան ջերմ ընդունելութեան: Ծրագրին համաձայն, նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, տեղի ունեցաւ Աթէնքի «Սարտարպատ» խումբին կողմէ պատրաստուած թատերական ներկայացում մը, Թեսաղոնիկէի Զինուորական թանգարանի սրահին մէջ, որ ծայրէ ծայր լեցուած էր երիտասարդներով, Թրակիոյ շրջաններէն եկած եւ թեսաղոնիկահայ երկսեռ հայրենակիցներով՝ որոնք փութացած էին վայելելու մեր երիտասարդներուն գնահատելի այս ճիգերը: Թատերախաղի սկզբնաւորութեան՝ «Ս. Թեիլիբեան» խումբի խմբապետ պրն. Յովհաննէս Փափազեան, հակիրճ ուղերձով մը, «բարի գա-

լուստ» մաղթեց հիւրերուն եւ բացատրեց նպատակը հանդիպումին, թուելով ծրագրուած ելոյթները: Ապա՝ խօսք առաւ Երիտ միութեան Կեդր. վարչութեան կողմէ պրն. Արա Մանկոյեան, որ ներկայացուց Երիտասարդաց միութեան խումբերու գործունէութիւնն ու նպատակները: Նշեց՝ հանդիպումներու կարեւորութիւնը եւ իր գնահատանքը յայտնեց «Ս. Թեիլիբեան» խումբին՝ իր նախաձեռնութեան համար: Տեղի ունեցաւ բեմադրութիւնը զանազան զաւեշտական կտորներու, որ զուարճացուցին հանդիսականները, որոնք ջերմօրէն ծափահարեցին «Սարտարպատ»ի տղաքն ու աղջիկները: Ներկայացուած կտորներուն մէջ դերեր վերցուցած էին՝ հետեւեալները.- Սերգօ Միսաքեան, Յարութիւն Մարտիկեան, Սերոբ Սերոբեան, Թագուիի Շեմմաս, Պերճ Գգիրեան, Վահրամ Եթիմեան, Ռոզա Միսաքեան, Գասպար Կարապետեան, Ստեփան Շեմմաս, Աւետիս Միսիկեան եւ Կարպիս Պէքէրճեան, որոնք յաջող խաղարկութիւն ունեցան: Ներկայացման երաժշտական բաժնին իր թանկագին աջակցութիւնը բերաւ սիրուած ու վստակաւոր խմբավար պրն. Արթիւր Մորճիկեան: (Շար. յաջորդ թիւին)



Խմբագր.՝ Արիսթոթելիոս 8 - Քալիթէա 17671
Հեռ. 210 95.5011 եւ 210 9521359 Fax: 210 9245334

«AZAT OR» (ΕΛΕΥΘΕΡΗ ΗΜΕΡΑ)
Αρμενική Ημερήσια Εφημερίδα

Ιδιοκτησία: /ΕλληνοΑρμενικό Φόρουμ
Μορφωτικό - Πολιτιστικό Σωματείο
Αριστοτέλους 8 - 176 71, Καλλιθέα
Ετήσια συνδρομή 210 ευρώ
Έκδοση - Διεύθυνση: Μάικ Τσιλικιριάν

Αφοι ΜΥΛΩΝΑ Ο.Ε. ΓΡΑΦΙΚΕΣ ΤΕΧΝΕΣ
ΜΥΛΑΟΝΤΟΣ 6 ΠΕΡΙΣΤΕΡΙ - ΤΗΛ/ΦΑΧ: 210 5770685

«AZAT OR» - Armenian Daily

8 Aristotelous 176 71, Kallithea - GREECE
TEL: 210 9575011 & 210 9521359 FAX: 210 9245334
E-Mail: azatordaily@gmail.com
դրամատան հաշիւ ALPHA BANK

IBAN GR 4901 401 160 116 00 200 200 9080

www.azator.gr
AZAD OR Armenian Daily Newspaper of Greece